Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի **EduArmenia** նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՊԻՍ՞Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ»

Հետազոտող ուսուցիչ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ՄԱՐԻԵՏՏԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Արարատի մարզ Ավշարի միջնակարգ դպրոց

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ -- -- -- -- -- -- -- -- -- -- -- --

1.Հետազոտության թեման
2.Հետազոտության նպատակը
3.Հետազոտության արդիականությունը
4.Հետազոտության վարկածը
5.Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:
6.Հետազոտության խնդիրները
7.Ներածական խոսք թեմայի մասին
8.Ուսուցման պրոցեսը և դրա ղեկավարումը.
9.Ուսուցման գործընթացի էությունը
10.Ուսուցման գործընթացի դժվարությունները
11.Նոր ժամանակների պահանջները դպրոցից և ուսուցման նկատմամբ նոր մոտեցումների անհրաժեշտությունը 12.Ուսուցչական մասնագիտության առանձնահատկությունները
13.Ուսուցչի մասնագիտության գործառույթները
14.Ուսուցչի անձնային որակները
15.Ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարը
16.Ուսուցչի կերպարի բացահայտումը:
17.Ուսուցչի անձնային կերպարում կարևոր

հատկություններ Են

18.ՈՒսուցիչ-ով է նա...

19.ՈՒսուցչի մանկավարժա-հոգեբանական կերպարը

20.ՈՒսուցչի մանկավարժական ու մասնագիտական կերպարը 21.Գործնական հետազոտություն

22.Եզրակացություն 23.Գրականություն:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ --- --- --- --- --- --- --- ---

1.Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է ներկայացնել մեր ժամանակների հանրակրթական դպրոցի ուսուցման առանձնահատկությունները և ժամանակակից դպրոցին ներկայացված պահանջները, որոնք առաջացել են նոր ժամանակներում, օրեցոր զարգացող հասարակական կյանքի առաջընթացի ու ժամանակակից հանրակրթական դպրոցի ուսուցման նպատակները համատեղելու մարտահրավերներով: Միաժամանակ հարկ կա բացահայտելու ժամանակակից ուսուցչի այն հատկանիշները, որոնք կօգնեն մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կարևոր խնդիրը և ապագա հասարակության ձևավորման կարևորագույն առաքելությունը հաջողությամբ իրականացնելու հարցում: Սրանք հույժ կարևոր խնդիրներ են, որ կանգնած են ժամանակակից դպրոցի և ժամանակակից ուսուցչի առջև ու հատկապես Հայաստանի կրթական

համակարգի առաջ: Ահա սա է պատճառը, որ Հայաստանի հանրակրթական դպրոցի կրթական և ուսուցման գործընթացների կազմակերպման հարցում լուրջ բարեփոխումներ են սկսված: Գաղտնիք չէ, որ դպրոցը պետք է քայլի հասարակության պահանջներին ընդառաջ,այլապես դժվար է պատկերացնել, որ դպրոցում դաստիարակված ու կրթված նոր սերունդը կարող է ետ մնալ իր ժամանակի նոր հասարակության մեջ ձևավորված գիտակրթական մակարդակից, նոր ժամանակների բարոյա-հոգեբանական զարգացման աստիճանից, նոր ու ժամանակակից աշխարհհայացքից և ընդհանրապես կյանքից: Դպրոցի նպատակը ապագա սերնդի դաստիարակումն է, ուրեմն դպրոցը պետք է ոչ միայն դաստիարակի մի սերունդ, որն իր գիտելիքներով ու բարոյա-հոգեբանական արժեհամակարգով համապատասխանի հասարակական կյանքի պահանջներին,այլև հասնի նրան ,որ դպրոցում կրթված սերունդն իր մտածողության մակարդակով գոնե մեկ աստիճանով բարձր լինի այսօրվա հասարակության մակարդակից, չէ որ, նրանք ապագա սերունդն են ու նրանք պետք է կառուցեն մեր ապագան: Ահա սա է դպրոցի գլխավոր առաքելությունը և ինձ ուսուցիչ- հետազոտողիս հետաքրքրում է, թէ արդյոք այսօրվա դպրոցը կարող է իրականացնել իր այսպիսի կարևոր առաքելությունը արդի հասարակության աճող պահանջմունքներին ընդառաջ և աշխարհի գիտա-տեխնիկական առաջընթացի ոգով: Եվ քանի որ ապագա սերունդների առջև դպրոցն ունի ոչ միայն մատաղ սերնդի դաստիարակման ու նրանց համամարդկային արժեքների փոխանցման գործընթաց իրականացնելու առաքելություն,այլև ազգային նպատակների ու ազգային արժեքների ձևավորման առաքելություն, ուստի դպրոցի դերն էլ ավելի է կարևորվում մեր ժամանակներում: Մեր երկրում ծավալված պատերազմական իրավիճակով պայմանավորված և մեր ժողովրդի ազգային, հայրենասիրական,պաշտպանական ու ռազմական գործողությունների լույսի ներքո դիտարկելով այսօրվա դպրոցի առաքելությունը,պետք է սովորողների դաստիարակությունը այնպես տանել, որ նրանց մեջ ուժեղանան հայրենասիրական զգացումները, ազգային արժեքների նկատմամբ սերը, հայրենիքի պաշտպանության և ազգային իդեալներին հասնելու խնդիրները դարձնելով նրանց կյանքի նպատակ: Հաշվի առնելով հատկապես,որ այսօրվա իրավիճակում ,մեր երկրի պաշտպանության առաջնագծում 18 տարեկան հայ զինվորն է կանգնած, նա երեկվա դպրոցականն է,որի կերպարը ձևավորվել է դպրոցում, մատաղ սերնդի

հայրենասիրական դաստիարակությունը առաջնային պլան պետք է մղվի: Եվ, ուրեմն, ինձ ,հայ ուսուցչուհուս հետաքրքրում է Հայաստանի կրթական համակարգը ,որը պետք է իրականացնի հայ դպրոցականի, հայ պատանու կամ պարմանուհու, անչափահաս ու չափահասության տարիքում գտնվող սովորողների համակողմանի ու ներդաշնակ ձևավորումը և նոր ժամանակներում ուսուցչի կերպարի արժևորումը, որոնք հիմք կդառնան մեր ազգային նպատակների իրագործման համար: Նոր ժամանակներում հայկական դպրոցի ու հայ ուսուցչի առջև դրված են կարևոր հարցեր. Ինչո՞ւ մենք չենք կարողանում ձևավորել մեր ազգի իդեալներին համապատասխան հասարակություն և հզոր ու պաշտպանված պետություն: Ո՞րն է այսօրվա հայկական դպրոցի դերը մեր պետականության հզորացման և ազգային գաղափարարախոսությամբ տոգորված, միասնական շահեր ունեցող հասարակության ձևավորման հարցում: Ի՞նչ դեր ունի հայ մանկավարժը, ուսուցիչը մեր երկրի զարգացման, վերակերտման, հզորացման ու հայրենիքի պաշտպանության գործում: Ինչպիսի՞ն պետք է լինի ուսուցիչը,որ կարողանա ստեղծել մի սերունդ, որը կլինի հայրենասեր և իր մեջ կկրի ազգային իդեալներին նվիրվածության հատկանիշներ:
Մենք պետք է կարողանանք դաստիարակել ու կրթել մի սերունդ, որ կդառնա հզոր հայրենիքի վերակերտման ու հայրենյաց շահերի պաշտպանության ճարտարապետը, հայրենիքի հզորացման շինարարն ու մեր ազգի հոգևոր միասնականության հայրապետը: Ահա այսպիսի մեծ նպատակներ պետք է իրագործեն մեր ժամանակների հայկական դպրոցն ու հայ ուսուցիչը: Ահա այս հարցերի պարզաբանման նպատակով էլ ես կատարում եմ հանրակրթական դպրոցի ուսուցման պրոցեսի և ուսուցչի աշխատանքի հետ կապված գիտա-մանկավարժական հետազոտություն , ցանկանալով պարզել դպրոցի և ուսուցչի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, նրանց ազգային ինքնագիտակցության բարձրացման ,հայրենիքի պաշտպանության և հզորացման գործում:

2.Հետազոտության արդիականությունը

----------Հետազոտությունը արդիական է մեր

ժամանակներում ու հատկապես մեր երկրում, հաշվի առնելով այն քաղաքական բարդ իրավիճակը, որում մենք հայտնվել ենք ու այս պայմաններում, երբ դժվարացել է կյանքը, հասարկությունը կանգնած է սոցիալական կյանքի նոր պահանջմունքների բավարարման , առողջական նոր խնդիրների լուծման առաջ, առաջնային պլան է մղվել անձնական կյանքի ապահովման խնդիրը,գոյության պայքարը, հետևաբար նվազել է հետաքրքրությունը կրթության և ուսուցման նկատմամբ, որն անթույլատրելի է, որովհետև Նոր ժամանակները թելադրում են կրթված սերնդի ստեղծման պահանջներ, գիտության և տեխնիկայի զարգացման այս նոր ժամանակներում կարիք կա նոր, գիտակից սերնդի ստեղծմանը, ուրեմն պետք է փնտրել ուսուցման արդյունավետ իրականեցման նոր եղանակներ, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն ուսուցման գործընթացը և կբացահայտեն ուսուցման կազմակերպման հարցում ուսուցչի դերի բացառիկ առանձնահատկությունները: Բացի այդ, այսօր մեր երկրում ուսուցիչների քանակը փոքրանում է, որոշ դպրոցներ զրկվել են իրենց ուսուցիչներից. կան պատճառներ, որոնք պետք է բացահայտել , ուստի այս հետազոտության միջոցով պետք է արդիական այս խնդիրը ոչ միայն վեր հանել,այլև , լուծումներ առաջարկել: Հետազոտությունս արդիական է հատկապես այն առումով, որ Հայաստանում այս ժամանակներում դեռ ընթանում են կրթական բարեփոխումները, որոնվում են ուսուցման արդյունավետության բարձրացման նորանոր ուղիներ, տեխնոլոգիաներ , առաջադեմ մեթոդներ, վերանայվում են դասագրքերը, ուսուցման ծրագրերը, դպրոց են մտնում նոր կրթական պետական չափորոշիչները,կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ուսուցչի աշխատանքի գնահատման,նրա աշխատավարձի վերանայման , աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ,սակայն դրանք բավարար ու ընդունելի չեն լինի, եթե չլինեն ուսուցիչների հեղինակային կարծիքները, որոնք հենց իրենց աշխատանքից գիտեն դպրոցական կյանքի, կրթական ծրագրերի,դասագրքերի, սովորողների ուսուցման թերությունները և կարող են նախանշել բարեփոխումների ուղղությունները ու հենց իրենք կարող են մատնանշել իրենց աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ քայլերը և ահա իմ այս աշխատանքով մի յուրահատուկ արահետ է բացված այս խնդիրների հետազոտման և լուծման եղանակների որոնման համար և այս նպատակով կիրականացվի մի հետազոտություն,որտեղ կշոշափվեն վերոհիշյալ հարցերը ,որոնք ի դեմս ինձ,

կներկայացվեն որպես մի ուսուցչի խոսք, որն անցել է մանկավարժական աշխատանքի երկարամյա ճանապարհով ու անձամբ գիտի դպրոցի և ուսուցման գործընթացի խնդիրները և շատ կարևոր է համարում ուսուցչի հեղինակության բարձրացումը մեր ժամանակներում և ուսուցիչների հեղինակության բարձրացման, նրանց սոցիալական վիճակի բարելավման համար անհրաժեշտ միջոցառումների անհրաժեշտությունը : Այս օրերին,երբ մեր երկիրը գտնվում է պատերազմի մեջ,վտանգված է մեր երկրի պաշտպանությունը և մեր ժողովրդի խաղաղ ապրելու իրավունքը, մենք պետք է հասկանանք , որ սխալներ են եղել նաև մեր կրթական համակարգում և մենք մեզ արժանի սերունդ ու պետություն չենք կառուցել և դրանում թերացել է մեր, հայկական դպրոցը, թերացել ենք մենք՝ ուսուցիչներս: ՈՒրեմն անհրաժեշտ է վերափոխել դպրոցն ու ուսուցման գործընթացի նպատակները և ուսուցչի ու նրա աշխատանքի նկատմամբ մեր պետության ու հասարակության կողմից ձևավորված վերաբերմունքը.հայ ուսուցիչն այսօր չի դարձել մեր հասարակության հեղինակավոր անձը, նա լավ չի վարձատրվում,լավ չի ապրում, ստիպված է օրենքով չկարգավորված կրկնուսույցի դեր ստանձնել, կողմնակի այլ աշխատանքներ տանել, որ կարողանա լավ ապրի: ՈՒսուցիչն իր աշխատանքում ստիպված է կրել նոր սերնդի ազատ վարքագծի դրսևորման դառը հետևանքները ու դրանց շտկման դժվարությունները և այդ ճանապարհին բախումներ ունենալով ծնողների,գործընկերների, դպրոցի տնօրինության, օրենքի և ընդհանրապես հասարակության հետ ու այս պայքարում կորցնելով իր հեղինակությունը , ուսուցիչը փաստացի միայնակ է մնում իր առջև ծառացած խնդիրներով. նա դասավանդում է դասարանների, որոնք քանակով շատ են *(25-30)*, որը դժվարին է, նրա ծանրաբեռնվածությունը շատ է, աշխատավարձը ցածր է, չի վայելում իրեն ու իր աշխատանքին արժանի հեղինակություն, ենթարկվում է անչափահասների չնորմավորված , կարգազանց ,երբեմն օրինազանց վերաբերմունքին , ծնողների ճնշմանը, հասարակության մեջ առանձնակի չի արժևորվում նրա դերը աճող սերնդի դաստիարակման գործում և նսեմացվում է նրա հեղինակությունը,ուսուցչի մասնագիտությունը չի արժևորվում պետական այրերի կողմից, ուսուցչի աշխատանքը արժանիորեն չի գնահատում պետությունը: Ահա այս խնդիրների առջև կանգնելով այսօրվա ուսուցիչը լուռ հեռանում է դպրոցից կամ էլ ստիպված է աշխատել ոչ սիրով ու նվիրումով: Այս իրավիճակը պահանջում է փոփոխություններ

կրթական գործընթացներում, ուսուցչի նկատմամբ վերաբերմունքում , նոր սերնդի դաստիարակման գործում: Արդի պահանջ է դառնում նոր դպրոցի ձևավորման ու նոր սերնդի ստեղծման գործընթացների իրականացումը: Ահա այս կարևոր կրթական առաքելության առանձնահատկությունների բացահայտման համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի հետազոտություններ, նպատակ ունենալով բացահայտել նոր հայացքներ կրող սովորողի, նոր առաքելություն ունեցող կրթական գործընթացի և նոր արժեհամակարգ ունեցող ուսուցչի կերպարների ձևավորման առանձնահատկությունները:Ահա այս նպատակով էլ իրականացնում եմ իմ հետազոտական աշխատանքը: Ահա թե որքան արդիական ու պահանջված է թեմաս և ես մեծ սիրով իրականացնում եմ հետազոտությունս ու ես հույս ունեմ, որ իմ հետազոտությամբ կստեղծվի մի նյութ, որը օգտակար կլինի դպրոցի կրթական բարեփոխումներին: Որպես մանկավարժ խոսքս ուզում եմ ավարտել մեր երկրին,մեր հինավուրց ու նոր Հայաստանին մաղթելով հաղթանակներ և խաղաղություն, որ կարողանանք ապրել , դաստիարակել և ուսուցանել…

3.Հետազոտության խնդիրները

---------- 1).Ուսուցման գործընթացը և ուսուցչի մասնագիտության առանձնահատկությունները: 2).Ուսուցան գործընթացի և ուսուցչի աշխատանքի բովանդակությունը և դերը կրթության և մատաղ սերնդի դաստիարակման գործում : 3). Ուսուցման գործընթացին և ուսուցչի անձնային կերպարին ներկայացվող պահանջները: 4)Ուսուցման գործընթացի իրականացման մանկավարժա-հոգեբանական պահանջները և ուսուցչի մասնագիտական կերպարին ներկայացվող պահանջները: 5)Ուսուցման պրոցեսը անձի կրթության և դաստիարակության միջոց, և ուսուցիչը ուսուցման պրոցեսի շարժիչ ուժ: 6).Ուսուցման պրոցեսում առկա խնդիրները և ուսուցչի դերը ուսումնական պրոցեսի խնդիրների լուծման գործում: 7).Ուսուցման պրոցեսի իրականացումը և ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարի ազդեցությունը ուսուցման պրոցեսի վրա : 8).Ժամանակակից դպրոցի ու ժամանակակից ուսուցչի արդիական կերպարը: 9).Հայկական դպրոցը և հայ ուսուցչի ուսուցողական նպատակները:

*10).*ՈՒսուցչի աշխատանքային խնդիրները և նրա սոցիալական վիճակի ազդեցությունը ուսուցչի հեղինակության վրա*:*

4.հետազոտության վարկածը **ՈՒսուցման գործընթացը մեծապես կախված է ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարից*:***

*** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** *** ***

5.Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը ---------- Այս աշխատանքով ես կներկայացնեմ ժամանակակից հանրակրթական դպրոցի առանձնահատկությունները և նրա առջև ծառացած խնդիրները*:* Ներկայացնելով նաև հանրակրթական դպրոցի գլխավոր դեմքի՝ ուսուցչի կերպարը,նրա աշխատանքի կարևորությունը, աշխատանքում առկա խնդիրները, կներկայացնեմ նաև հանրակրթական դպրոցի ուսուցման պրոցեսի առանձնահատկությունները և այդ պրոցեսի արդյունավետ իրականացմանը խանգարող հանգամանքները ու այդ հարցում ուսուցչի անհատական կերպարի կարևորությունը, նրա բացառիկ ազդեցությունը ուսուցման պրոցեսի արդյունավետ իրականացման վրա*:* Իմ այս հետազոտական աշխատանքում կբացահայտվեն ուսուցման գործընթացի և ուսուցչի աշխատանքի դրական կողմերը և այն խոչընդոտները,որ կան ուսուցման պրոցեսում և ուսուցչի աշխատանքում*:* Թեմայի վերաբերյալ բերելով տեսական հիմնավորումներ ու գործնական հարցումներով հավաքելով ժամանակակից կարծիքներ կկարողանամ ձևակերպել թեմայիս եզրակացությունը,որը կարծում եմ կարևոր նշանակություն կունենա հանրակրթական դպրոցի ուսուցչի աշխատանքում և այն կիրառական ,կրթական նյութ կտա Հ.Հ.կրթական մարմիններին՝ դպրոցը,ուսուցման պրոցեսը,ուսուցչի աշխատանքը բարեփոխելու համար ու հատկապես այս օրերին, երբ կառավարությունը լայն մասշտաբով բարեփոխումներ է

իրականացնում դպրոցական համակարգն ու ուսուցչի աշխատանքը բարեփոխելու համար,որոնք բխում են նոր ժամանակների պահանջներից ու ժամանակակից դպրոցի առաջ ծառացած նոր մարտահրավերներից,ուսուցչի ու աշակերտի շահերից: Ահա այսպիսին է թեմայիս նշանակությունը.այն կարևոր նշանակություն ունի հանրակրթության կազմակերպման մեջ ու մանկավարժական գործառույթներ իրականացնելիս, որոնց համար հավաքել եմ և տեսական և գործնական նյութեր, դանք ձևակերպել իմ մանկավարժական ստեղծագործական ու երևակայական մտքով ու մանկավարժի իմ կենսափորձով: Թեմայիս տեսական ու գործնական նշանակությունը մեծ է հատկապես մեր օրերում, երբ մեր երկրում կրթական բարեփոխումներ են իրականանում, և այս առումով հետազոտությանս հիմնական նպատակը և հետազոտությանս գլխավոր առարկան.ուսուցիչը և նրա աշխատանքը, այսօր էլ ավելի են կարևորվում հատկապես Հ.Հ.Կառավարության նախանշած կրթական բարեփոխումների լույսի ներքո: Տ

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ ---- --- --- --- --- --- --- --- --- **Ս**ԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ԿԱՐԴԱ ԻՄ ԽՈՍՔԸ Եվ ԴՈՒ ԿԼՍԵՍ ԻՄ ՀՈԳՈՒ ՁԱՅՆԸ ՈՒՆԿՆԴԻՐ ԵՂԻՐ ԵՎ ԴՈՒ ԿԳՏՆԵՍ ԻՄ ՍՐՏԻ ՀՈՒՅԶԸ ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ՍԱ ՄՏՔԻ ԹՌԻՉՔ Է ԵԿ ԱՅՍՏԵՂ ՓՆՏՐԵՆՔ ՈՒՍՈՒՑՉԻ ԲԱՐԻ ՀԵՏՔԸ ԹՈՂ ԲԱՐԻ ԼԻՆԻ ՆԱԵՎ ՔՈ ԽՈՀՈՒՆ ՄՈՒՏՔԸ: * * * * * * * *

* * * * * * **ՄԱՐԻԵՏՏԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

* * * * * * * * * * * * * *

Ես ֆիզիկայի ուսուցչուհի եմ, մանկավարժական գործի մի նվիրյալ,որն իր ուսումնական գործունեությունը սկսել է նախ դպրոցում ,գերազանց առաջադիմություն ցուցաբերելով, այնուհետև բարձր առաջադիմությամբ մանկավարժական բուհում ուսանելով : Տարիներ առաջ

մանկավարժական համալսարանն ավարտելուց հետո, ես սկսել եմ մանկավարժությամբ զբաղվել հենց իմ բնակավայրում ,Կոտայքի մարզում ու իմ դպրոցում և իմ ուսուցիչների հետ միասին աշխատելով:Բուհն ավարտելուց հետո սիրով եմ լծվել մանկավարժական աշխատանքին ու աշխատել նվիրումով:Անչափ սիրում էի իմ աշխատանքն ու իմ սաներին:Սակայն չբավարարվեցի 1 կրթությամբ ու աշխատանքի ընթացքում ավարտեցի մանկավարժական համալսարանի ևս 2 բաժիններ, մագիստրոսական կրթությամբ և ժամանակ առ ժամանակ կատարելագործվելով,մանկավարժական մի քանի մասնագիտացումներ եմ ստանում մանկավարժական համալսարանում , ձեռք բերում մանկավարժության և հոգեբանության մագիստրոսի աստիճան ու դառնում ոչ միայն ֆիզիկայի ուսուցչուհի, այլև դպրոցի մանկավարժ-հոգեբան: ՈՒ այս պաշտոններում սիրով եմ իրականացրել իմ մանկավարժական գործունեությունը, կազմակերպել բազմաթիվ ինտելեկտուալ ու գեղարվեստական միջոցառումներ, սիրել եմ իմ աշխատանքը,իմ սաներին եվ ուրախացել նրանց հաջողություններով ու ամեն ինչ արել նրանց հայեցի դաստիարակության ու բարոյական արժեհամակարգի ձևավորման համար: Աշխատանքս այնքան սիրով էի անուում, որ մանկավարժությունը կարծես իմ տարերերքն էր դարձել ու մոռացել էի անգամ անձնական կյանքս դասավորել:Ես անչափ սիրում էի իմ աշխատանքն ու իմ աշակերտներին: Անցել են տարիներ.աշխատանքս դարձել էր նվիրում մատաղ սերնդին ու հոգևոր սնունդ ինձ համար … Եվ այսպիսի նվիրումով աշխատելով, այժմ ունեմ աշխատանքային երկար տարիների փորձ, ֆիզիկայի ուսուցչուհու և դպրոցի հոգեբան-մանկավարժի պաշտոններում ու այս ընթացքում նույնիսկ փորձ եմ արել դառնալ դպրոցի փոխտնօրեն ու տնօրեն, սակայն հանգամանքներն այնպես դասավորվեցին , որ մնացի մանկավարժության ասպարեզում և նույնիսկ ստիպված եղա փոխելու աշխատանքային միջավայրս ու նոր աշխատանք փնտրելու նոր դպրոցում,ինձ համար անծանոթ միջավայրում , որը ստիպեց ինձ նոր ջանքեր ներդնել ու նորովի մոտեցումներ փնտրել իմ աշխատանքում, երբեմն ոգևորությամբ ու երբեմն հուսահատությամբ ընդունելով նոր աշակերտներիս կրթական հաջողությունները, և նրանց վարքագծային թերությունները: Ստացվել է այնպես, որ մանկավարժի իմ աշխատանքը այստեղ դարձել է ամենօրյա փոփոխությունների ու նորամուծությունների մի ասպարեզ, որտեղ նորովի են

բացահայտվում ուսուցչի կերպարի ընկալումը, նրա անձնային ու մասնագիտական հատկությունների ազդեցության շրջանակները և ես փորձում եմ շատ բան վերանայել իմ կերպարում,ուսուցիչ-աշա- կերտ հարաբերություններում և ձևավորել նոր, ժամանակակից մոտեցումներ, ժամանակակից սերնդի հետ հարաբերվելիս ու հաշվի նստելով այն իրողության հետ, որ ուսուցչի մասնագիտությունը քարացած , ընդունված կանոնների ու որոշակի անփոփոխ գործառույթների իրականացման հետ չի համատեղվում,տարբեր կանոնավոր ու ընդունված սկզբունքների չի ենթարկվում,այն անհատական,ստեղծագործական աշխատանք է, որում միշտ կան չնախատեսված հարցադրումներ ու չպլանավորված լուծումներ, որոնց միշտ պատրաստ պետք է լինի ցանկացած ուսուցիչ:Ահա այսպիսի եզրահանգման եմ եկել ինձ համար նոր միջավայրում աշխատելով ու իմ առջև ծառացած խնդիրների համար ամենօրյա լուծումներ փնտրելով և հասկանալով, որ դժվարությունները ստիպում են ինձ ավելի կատարելագործել իմ կերպարը և՛ անձնային և՛ մասնագիտական առումով,ես ամենօրյա փոփոխությունների մեջ եմ, որի համար շնորհակալ եմ այն նոր դպրոցին,որում աշխատում եմ: Այս պահին ես մանկավարժական գործունեություն եմ ծավալում Արարատի մարզի գյուղերից մեկում, որտեղ ամեն օր պետք է աշխատանքի հասնեմ Կոտայքի մարզից: Իմ ամենօրյա աշխատանքին հասնելու համար անգամ ինձ շատ ջանքեր են պետք լինում և ես հենց օբյեկտիվ գործոններով պայմանավորված շատ դժվարություններ եմ կրում իմ աշխատանքում ու երբեմն իմ կարգավիճակը ճիշտ չի ընկալվում տնօրինության կողմից, արժանանում եմ դիտողությունների , չի գնահատվում իմ կրթական աստիճանն ու մանկավարժի իմ կերպարը և այս գյուղում սիրով աշխատելու իմ ցանկությունը, սակայն իմ սաների նկատմամբ ունեցած սերն ու նրանց կողմից ստացած ակնածանքը, ինձ թևեր է տալիս ու ես ամեն օր սկսում եմ դասս նորովի, նոր ուժ ու եռանդ ստացած, որտեղ էլ իրականացնում եմ իմ ամենօրյա մանկավարժա-հոգեբանական աշխատանքները, փորձում եմ իմ սաների մեջ ոչ միայն սեր արթնացնել ֆիզիկա առարկայի նկատմամբ,այլև փորձում եմ շտկել երեխաների վարքագծային թերությունները :Եվ այս օրերին հենց այս դպրոցի պահանջով եմ գտնվում պարտադիր ատեստացիայի մեջ ու իմ մանկավարժա-հոգեբանական հետազոտություններս էլ կիրականացնեմ այդ դպրոցում : Ահա այսպիսինն է իմ մանկավարժական ուղին , որի ընթացքում եկել եմ այն եզրահանգման,որ ուսուցչի կերպարը խիստ կարևոր է

մատաղ սերնդի դաստիարակության և ուսուցման հարցում ու այս համոզվածությամբ , իմ կենսափորձով ու գիտելիքներով կփորձեմ իրականացնել ուսուցչի կերպարի բացահայտման հետազոտական աշխատանքները, ներկայացնելով ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարի ազդեցությունը ուսուցման պրոցեսի վրա,որն էլ ընտրել եմ իմ այս տարվա պարտադիր ատեստացիայի անցման համար պահանջվող հետազոտական աշխատանքի թեմա և այս պահին դասավանդելով «ֆիզիկա»՝ իմ մասնագիտական առարկան, կներկայացնեմ ոչ միայն ուսուցչի առջև ծառացած խնդիրները,այլև այն խնդիրները, որոնք առաջանում են ֆիզիկայի և ընդհանրապես բնագիտական առարկաների դասավանդման պրոցեսում: Եվ այս ամենում կարևորելով ուսուցչի դերը, կփորձեմ ներկայացնել ուսուցչի կերպարին բնորոշ առանձնահատկությունները: Ահա այս նպատակադրումով էլ ներկայացնում եմ թեմաս, փորձելով բնորոշել ոչ միայն ուսուցման պրոցեսի իրականացման ժամանակակից մարտահրավերները,այլև ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարի ազդեցությունը ուսուցման պրոցեսի վրա: Սիրելի ունկնդիր .այստեղ իմ խոհերն են, իմ մտքերն են ու պատառիկներ իմ կյանքից, որոնք ներկայացնում եմ քեզ, ականատես եղիր ուսուցչի անցած ճանապարհին, ու ինձ հետ միասին հետազոտիր ուսուցչի անցած ուղին ու փորձիր արժևորել նրա դերը մեր հասարակության մեջ և վերակերտել նրա վեհ կերպարը,գիտակցելով,որ «հանճարներն էլ են ուսուցիչ ունեցել», իսկ բացառիկ ուսուցչի սուրբ կերպար է Հիսուս Քրիստոսը, ուրեմն մեր հոգու անեզր սերը ու սրտի սուրբ հավատամքը հղենք այն մարդուն, որի կոչումը ուսուցիչ է, իսկ աշխատանքը նվիրում… Հետազոտական աշխատանքս հիմնականում կլինի որպես գիտական , հեղինակային խոսք,ծաղկաքաղ արած գիտական մտքերից ու ծնված իմ երկարամյա մանկավարժական գործունեությունից:

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ----- * ----- * ----- * ----- * -----

ԳԼՈՒԽ-*1*

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

----- ----- ----- ----- -----

1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԵՎ ԴՐԱ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

--- --- --- --- --- --- --- ---

Մարդու կյանքն իր բազմակողմանի դրսևորումներով (ֆիզիկական,կենսաբանական,սոցիալական,հոգեվոր ,մշակութային,սոցիալ -տնտեսական, իրավա-քաղաքական և այլն) սկսում ու զարգանում է հասարակական ընդհանուր կառույցում. հասարակական կյանքում,որտեղ համատեղ կեցությունը պահանջում է միմյանց գնահատող, ընկալող, հանդուրժող փոխհարաբերություններ, որոնք ձևավորվում են որոշակի ընդունելի կանոններով, բարոյական նորմերով ու հասարակական շփման հարգալից ձևերով, որոնց մասին մարդը իր մանկական տարիքից սկսած իմանում է նախ իր ընտանիքում՝ մեծերի անցյալի փորձով, սեփական դիտողական ընկալումներով ու իմացական գիտելիքներով, այնուհետև մարդը ստանում է կրթություն ու դաստիարակություն կրթական օջախներում, դպրոցներում, քոլեջներում,բուհերում և այլուր, որոնցում ստանում է բազմաթիվ գիտելիքներ, այդ կրթական օջախներում կազմակերպվող ուսուցման պրոցեսի շնորհիվ:

Ուսուցումը կրթության կենսագործման հիմնական ձևն է, որն ուղղված է համակողմանի ու ներդաշնակ զարգացած անձնավորության ձևավորմանը:Այն իրագործվում է սովորողներին գիտելիքներ հաղորդելու,

կարողություններ ու հմտություններ ձևավորելու եվ դրանց համապատասխան ուսումնա-իմացական պահանջմունքներ, հետաքրքրություններ արթնացնելու եւ խթանելու շնորհիվ:

Ուսուցումը և դաստիարակությունը նպաստում են անձի զարգացմանը և համակողմանի զարգացած անձնավորության կերտմանը:

Ուսուցման պրոցեսում իրականացվում են մանկավարժա-հոգեբանական գործառույթներ, այդ թվում կրթական, դաստիարաչական և զարգացման գործառույթներ:

Ուսուցման պրոցեսը կառուցվում է հաշվի առնելով աշակերտների տարիքային, անհատա-հոգեբանական առանձնահատկությունները,որոնց ներգործությամբ էականորեն փոխվում են մտավոր եւ իմացական գործունեության ձևերն ու մեթոդները:

Ուսուցման պրոցեսը ղեկավարում է ուսուցիչը կամ դասախոսը ,իսկ ուսում ստանում է աշակերտը կամ ուսանողը, ուրեմն ուսուցման պրոցեսը ուսուցիչների, և աշակերտների, դասախոսների և ուսանողների նպատակաուղղված,հաջորդաբար փոփոխվող փոխազդեցությունն է,որի ընթացքում լուծվում են սովորողների կրթության դաստիարակության ու ընդհանուր զարգացման խնդիրները, որոնք բխում են ուսուցման նպատակներից:

Ուսուցման պրոցեսի արդյունավետությունը մեծապես կախված է նրա ղեկավարից, ուսուցչից,որի անձնային ու մասնագիտական կերպարի առանձնահատկությունները իրենց ազդեցությունն են թողնում ուսուցման պրոցեսի վրա, սակայն ուսուցման արդյունքը ուղղակիորեն պայմանավորված է սովորողի հետաքրքրություններից,ցանկություններից, կարողունակություններից, որոնք համադրվելով ուսուցչի վարպետության, գիտելիքների ու մանկավարժական կարողությունների հետ, հիմք են ստեղծում ուսուցիչ-սովորող փոխհամաձայնեցված հարաբերություններով իրականացնելու ուսուցում և ուսումնառություն գործառույթները:

Ուսուցման պրոցեսը բարդ ու բազմաբնույթ գիտա-մանկավարժական, մանկավարժա-հոգեբանա-կան գործընթաց է,որտեղ ոչ միայն հաջողությամբ են ընթանում կրթության,դաստիարակության ու զարգացման առաջընթաց պրոցեսները,այլեւ այստեղ անխուսափելիորեն կայանում են նաև այդ պրոցեսների խեղումներ,բացթողումներ,

հետընթաց քայլեր, հապաղումներ ու նույնիսկ ձախողումներ,կապված ուսուցման պրոցեսում առկա դժվարությունների հետ,որոնք բազմաբնույթ են և հենց այստեղ է նաև կայանում լավագույն,սիրված ուսուցչի դերը,որն իր կերպարով նվազեցնում ու բացառում է ուսումնական դժվարություններն ու ուսումնական պրոցեսի խեղումները,որոնց համար ուսուցիչը պետք է օժտված լինի մանկավարժական գիտելիքներով,որոնց աղբյուրը մանկավարժական գիտության հարուստ պաշարն է:

Այս առումով մանկավարժական գիտության նպատակն է տարեց-տարի կատարելագործել ուսուցման պրոցեսը,որոնել ուսուցման նորանոր մեթոդներ,որպեսզի այն ոչ միայն ցանկալի, հետաքրքիր ու սիրելի գործունեության վերածվի,այլև, որ ամենակարևորն է. այն ընթանա արդյունավետ ու առաջընթաց հունով, նպաստի անձի ներդաշնակ ձևավորմանը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

Ուսուցումը դա մարդուն տրվող գիտելիքների կարողությունների ու հմտությունների իրականացման գործընթացն է,որի ընթացքում ձևավորվում է մարդու շրջակա միջավայրի ճանաչողությունը եւ աշխարհընկալումը:

Ուսուցման գործընթացը նպատակաուղղված մանկավարժսկան գործունեություն է,որը խթանում է սովորողների գործունեությունը , գիտսկան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու, իրենց ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու,գիտական աշխարհայացք ձևավորելու և բարոյական որակներ ու համոզմունքներ սեփականելու համար :

ՈՒսուցման գործընթացը իրականացվում է ուսուցչի ու աշակերտի միջև ,որոնց փոխհամաձայնեցված, կոնկրետ նպատակադրված աշխատանքը հնարավորություն է ստեղծում ուսուցման "ծառի" աճման եվ բարգավաճման համար:

Մշտապես պետք է իմանալ,որ չի կարելի ուսուցչին համարել միայն գիտելիքներ հաղորդող,իսկ աշակերտին միայն գիտելիքներ ստացող սուբյեկտներ,նրանք միասին ուսուցման պրոցեսի օբյեկտիվ հիմքն են ու նրանց բոլոր գործողություններով է պայմանավորված ուսուցման պրոցեսի հաջողությունը:

ՈՒսուցման գործընթացի հիմնական գործոնը հաղորդակցումն է,որն ավելի լայն հասկացություն է,քան ուսուցումը: Ուսուցչի եւ աշակերտի փոխկապակցված գործողություններում ուսուցչի գլխավոր նպատակը բովանդակալից հաղորդակցումն է աշակերտների հետ, իսկ աշակերտների նպատակը, այդ հաղորդակցմանը հետևելը ,իմաստավորելը եւ իրենց ու ուսուցչի գործողությունների միջոցով գաղափարների ,օրենքների ,տեսությունների, բարոյական նորմերի յուրացումը:

Այսպիսով,ուսուցման պրոցեսը ղեկավարում է ուսուցիչը ,որի ներգործությամբ խթանվում է աշակերտի ակտիվությունը եւ նա ակտիվորեն լծվում է ուսուցման գործընթացին,ստանալով իրեն հետաքրքրող ,անհրաժեշտ գիտելիքները,որոնց մակարդակը մեծապես պայմանավորում են ուսուցման արդյունավետությունը և հաջողությունները գիտելիքների յուրացման պրոցեսում:

Ընդհանրացնելով ուսուցման իրականացման հիմունքները կարելի է ասել,որ ուսուցման պրոցեսի վրա ընդհանուր առմամբ ազդում են հետևյալ պայմանները.

1).ՈՒսուցման բնույթը կախված է այն նյութից, որը յուրացվում է նրա բովանդակությունից և այն սկզբունքներից ,որով այն մատուցվում է:

2).ՈՒսուցումը կախված է ուսուցչի մեթոդական վարպետությունից եւ փորձառությունից ,նրա անձնավորության առանձնահատկություն-

ներից, ուսուցման այն կոնկրետ մեթոդիկայից,որը կիրառվում է յուրաքանչյուր առանձին դեպքում:

3.Ուսուցման պրոցեսը կախված է նաև աշակերտիների առանձնահատկություն-
ներից,նրա հոգեկան զարգացման (մտավոր, հուզական, կամային) անհատական բնութագրերից ,նրա մեջ ձևավորված վերաբերմունքից,ուսման նկատմամբ նրա ունեցած
հակումներից ու
հետաքրքրություններից:

Ուսուցման այս 3 կողմերը
միմյանց հետ
փոխկապակցված են և
ուսուցման պրոցեսը
հաջողակ է ընթանում,եթե
այս կողմերից
յուրաքանչյուրի ազդեցությունը հաշվառված է ուսուցման պրոցեսում,միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ ուսուցման պրոցեսի գլխավոր նպատակը աշակերտի կրթումն ու դաստիարակումն է և նրա հոգևոր,ինտելեկտուալ զարգացումը,պարզ է դառնում,որ ուսուցումը մեծապես կախված է աշակերտի անհատա-հոգեբանական առանձնահատկություն-
ներից,ուրեմն կարելի է ասել, որ ուսուցման պրոցեսի էությունը մեծապես կախված է նրանից ,թէ որքանով են բացահայտված աշակերտի անհատա-հոգեբանական առանձնահատկություն-
ներին ուսուցչի ուսուցման մեթոդների համապատասխանության ապահովման պայմանները:

Այս դեպքում արդեն կարելի է ասել,որ ուսուցման էությունը աշակերտի կրթումն ու դաստիարակումն է ,որը զարգացնում է նրան և նախապատրաստում ապագա կյանքին,որի իրականացումը տեղի է ունենում ուսուցչի ուղեկցությամբ:

Վերջին հաշվով ուսուցման գլխավոր խնդիրն է.ձևավորել աշակերտի ինքնուրույն ,ստեղծագործական մտածողությունը ,որի հիման վրա հնարավոր կլինի կենսագործել ուսման աստիճանաբար անցումը աշակերտի ինքնուրույնացման

2.ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

--- --- --- --- --- --- --- --- --- ---

Ուսուցման գործընթացն իր մեջ ներառելով մի քանի գործառույթներ, իր առջև դնելով մի շարք նպատակներ և իրականացնելով տարբեր մարդկանց կողմից ու դրանք ծառայեցնելով բազմազան անհատա-հոգեբանական, տարիքային առանձնահատկություններ

ով օժտված սուբյեկտների համար, դառնում է բարդ գործընթաց ,որտեղ էլ անխուսափելիորեն առաջանում են տարաբնույթ դժվարություններ,խնդիրներ,որոնք ժամանակին պետք է շտկվեն ու լուծում ստանան և ուսուցման ընթացքը համահարթեցվի ուսուցչի և աշակերտի պահանջմունքներին համապատասխան,հակառակ դեպքում ուսուցման դժվարությունները կխաթարեն ուսուցման պրոցեսը և կխանգարեն ուսուցչի մանկավարժական գործունեությանը և աշակերտների կրթման ու դաստիարակման գործընթացին:

Ուսուցման դժվարություններն են

1. անհատա-հոգեբանական դժվարություններ,
2. տարիքային դժվարություններ,
3. սեռական դժվարություններ,
4. առարկայական դժվարություններ,
5. սոցիալական դժվարություններ,
6. հոգեբանական դժվարություններ,
7. խոսքային դժվարություններ,
8. տնտեսական դժվարություններ,
9. ֆիզիոլոգիական դժվարություններ,
10. կենսաբանական դժվարություններ,
11. ընտանեկան դժվարություններ

Այս դժվարություններն իրենց հետ ծնում են ուսուցիչ-աշակերտ,աշա-կերտ-աշակերտ,ծնող-ուսու-ցիչ,երեխա-ծնող հաջող չկայացած փոխհարաբերություններից առաջացած դժվարություններ.

- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների հետ կապված դժվարություններ
- մանկական կոլեկտիվի հետ մերման հետ կապված դժվարություններ

- անձի ուսուցման նպատակների անորոշության հետ կապված դժվարություններ
- իր կյանքի,ուսուցման միջավայրի գոյության,ընտրության հետ կապված դժվարություններ
- անձի կամային թույլ կարողությունների հետ կապված դժվարություններ
- ծնող-աշակերտ հակասությունների հետ կապված դժվարություններ

Այս բոլոր դժվարությունների հաղթահարման բանալին մանկավարժա-հոգեբանական գիտելիքներով զինված ուսուցչի ձեռքում է, և այդ բանալին պետք է բացի այն դուռը ,որի ներսում արդեն կան ուսուցման համար անհրաժեշտ միջոցներ ու այդ միջոցների ներդրման կառավարչական մեթոդներ,այսինքն որքան էլ գլխավոր է ուսուցչի դերը դպրոցում,նույնքան էլ կարևոր են դպրոցի կառավարչական մեթոդները և չպետք է անտեսենք այն անհատին, որն այդ «ուսումնական տան» անդամն է ու իր մեջ արդեն կրում է իր ընտանիքի դաստիարակությունը,որը չպետք է հակասի ուսուցման մեթոդներին ու նպատակներին և իր կենսակերպով պետք է օգնի ուսուցչին հարստացնելու իր գիտելիքներն ու հոգեկերտվածքը և այդպիսով խաղաղություն կտիրի «ուսուցման տան»,

դպրոցի մեջ և այնտեղից դեպի հասարակական կյանք կգնա բարոյական արժեհամակարգով դաստիարսկված ,բազմակողմանի զարգացած ,բարոյական արժեհամակարգով օժտված, աշխարհայացքով

օժտված, գիտելիքներով

հարուստ ,ներդաշնակ

զարգացած ապագա քաղաքացի,որը ոչ միայն հաջողությամբ կկառուցի իր կյանքը,այլեւ մեծ ներդրում կունենա իր հայրենիքի ու իր միջավայրի բարգավաճման գործում: Ահա այս նպատակին պետք է ծառայի անհատի ուսուցման պրոցեսը,որի մեջ մեծ դեր ունեն դպրոցն ու ուսուցիչը որոնց աշխատանքը պետք է ծառայի ապագա

զարգացած քաղաքացու ձեւավորմանը,որոնց շնորհիվ կբացառվեն կամ նվազագույնի կհասցվեն ուսումնական դժվարությունները ուսուցչի աշխատանքը կդառնա պատվաբեր,իսկ աշակերտի ուսուցումը նպատակային:

Ուսուցման պրոցեսի հիմնական առաքելությունը.

այն է.համակողմանի զարգացած մարդ-անհատի ձևավորումը պետք է այնպես տանել ,որ նա ուսուցման ընթացքում հետաքրքրություններ դրսևորի ուսուցման ,կրթության,գիտելիքների ձեռք բերման,ապագա մասնագիտության

ընտրության նկատմամբ, կյանքում ձեռք բերած հմտությունների եւ ընդհանրապես շրջապատի նկատմամբ,հակառակ դեպքում երեխան դժվարանում է սովորել,որովհետև նրան չի հետաքրքրում այս կամ այն առարկան,կամ էլ պարզապես ոչնչով չի հետաքրքրվում:

Ուսուցումը կազմակերպելիս, ուսուցման դժվարությունները հաղթահարելիս պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ երեխաների մեծամասնությունը դպրոցն ու ուսումը ուղղակիորեն համադրում են ուսուցիչների հետ և որքանով լավ է ընկալվում ուսուցիչը երեխայի կողմից ,այնքան մեծ է նրա դպրոց հաճախելու ցանկությունը և այնքան ցանկալի է ուսուցման պրոցեսը և այս առումով դժվարությունից զերծ է լինում սիրված ուսուցիչն ու իր դասավանդած առարկան,

որովհետև աշակերտի ձգտումներն ու ցանկությունները ուժեղանում են սիրված եւ ընդունելի ուսուցչի ազդեցության ներքո:

Այո լավ ուսուցիչը կարող է դառնալ « բարի հրեշտակ»

երեխայի համար,

«հրաշագործ» ուսուցչի դասի ժամանակ, բայց նրա էության ու աշխատանքի վրա կարող են բացասական կամ դրական ազդեցություն թողնել նաև իր աշխատանքային միջավայրը, դպրոցի կառավարչական մեթոդները և դրանք իրականացնող ղեկավարները.դպրոցի տնօրենն ու փոխտնօրենը:

Դպրոցի կառավարման համակարգի դերը մեծ է դպրոցում հաջողակ ուսուցում իրականացնելու հարցում,ուստի դպրոցի կառավարման համակարգի թերությունները ,դպրոցի կառավարման ու ղեկավարման մանկավարժական, , հոգեբանական գիտելիքների զինվածության մակարդակը, , կառավարման սկզբունքներն ու անձնային որակները ուղղակի ազդեցություն են թողնում ոչ միայն ուսուցչական կոլեկտիվի բարոյա-հոգեբանական վիճակի վրա,այլև աշակերտների ուսման նկատմամբ ձևավորված վերաբերմունքի վրա ,ուստի շատ կարևոր են հատկապես դպրոցի կառավարման չափանիշները,որոնք կնպաստեն,որ սովորողները հեշտությամբ հաղթահարեն ուսումնական դժվարությունները եւ ուսում ստանալը կդառնա ոչ պարտադրված ,կամ անհրաժեշտ պրոցես,այլ ցանկալի և սիրելի գործունեություն:

Այսպիսով, ուսուցման

համակարգը ,որն

իրականանում է

ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների կայացմամբ, ուսուցչի ուսուցման և սովորողի կրթման ու դաստիարակման գործընթացը որքան էլ պլանավորված ու ծրագրված լինի,այն մեծապես կախված է այդ գործընթացները իրականացնողների սուբյեկտիվ վերաբերմունքից, պարզ է որ ուսուցման պրոցեսը ոչ միայն օրինաչափ է և ծրագրավորված,այլև կարող է լինել անորոշ,իրադրային և անկանխատեսելի, և հենց այս հատկությունները կարող են դժվարացնել ուսուցման պրոցեսը և այդ դժվարությունների առաջ մշտապես կանգնած է ուսուցում իրականացնողը,

*1.*ուսուցիչը, որի անձնային

ու մասնագիտական կերպարը դառնում է վճռորոշ գործոն սովորողի ուսումնական դժվարությունները հաղթահարելիս և ուրեմն հաջողությամբ կարող է ընթանալ այն ուսումնական գործընթացը, որի ղեկավարումը իրականացվում է խելամիտ մանկավարժական ու հումանիստական սկզբունքներով , կրթական չափորոշիչներին համապատասխան,հաշվի առնելով ուսուցման նպատակները,սովորողի անձնային հոգեբանական պահանջմունքները և

տարիքային առանձնահատկությունները*:*

ԳԼՈՒԽ-*2*

-- -- -- -- --

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ

ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ

---------- --------- -------- ---------

***3.* ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԴՊՐՈՑԻՑ, ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

----- ----- ----- ----- ----- ----- ---

Արդի ժամանակաշրջանում , հասարակական զարգացման և գիտատեխնիկական առաջադիմության բուռն տեմպերը թելադրում են հասարակության անդամների և առաջին հերթին մատաղ սերնդի կրթվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը*:* Ժամանակներն այնպիսին են, որ հասարակական պահանջմունք է դառնում ընդհանուր միջնակարգ և ավագ դպրոցի կրթությունը, աշակերտների ուսուցման ու դաստիարակության որակի բարելավումը ,դպրոցական

կրթության բովանդակության համապատասխանեցումը գիտության ,տեխնիկայի և մշակույթի արդի մակարդակին ու զարգացման հեռանկարներին:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը պահանջում է ոչ միայն ուսուցման պրոցեսի արդիականացման համար նոր մեթոդների և ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառում կրթադաստիարակչական գործընթացում, այլև, որ ամենակարևորն է, բարձրացնել ուսուցման պրոցեսի ղեկավարի, ուսուցչի մասնագիտական մակարդակը ,նրան զինել բարձր հոգեբանական գիտելիքներով ,ուշադրություն դարձնելով ուսուցչի անձնային որակական հատկանիշների վրա, ինչպես նաև նրա մանկավարժա- - հոգեբանական ,կազմակերպչական ,ստեղծագործական հատկանիշների վրա, որոնցից է կախված ոչ միայն ուսուցման պրոցեսի արդյունավետությունը այլև ուսուցչի աշխատանքային հաջողություններն ու մատաղ սերնդի կրթության ու դաստիարակման գործընթացների իրականացումը:

Այս հարցում առաջնային ու կարևոր դերը պատկանում է դպրոցին ,որի ղեկավարումը պետք է իրականացվի գրագետ,պրոֆեսիոնալ, հումանիստական ու մանկավարժա-հոգեբանա- կան սկզբունքներով, որոնց շնորհիվ նպաստավոր պայմաններ կստեղծվեն ապագա սերնդի ուսուցման պրոցեսի արդյունավետ իրականացման համար:

Ահա այս նպատակների իրագործման համար է, որ վերջին տարիներին բարեփոխումները դպրոցներում փոխարինում են մեկը մյուսին և կրթության մեջ նորի ու արժեքավորի որոնումները պատճառ են դառնում կրթական համակարգի անընդհատ փոփոխության և այս նախաձեռնությունները մի կողմից թարմացնում են մի կողմից կարծես «քարացած» նախկին կրթական համակարգը,մյուս կղմից փոփոխությունները վտանգում են կրթական կառույցի հիմքերի ամրապնդումը, ցնցումներ առաջացնում կրթության համակարգում: Այնուամենայնիվ նոր ժամանակները նոր պահանջներ են դնում

դպրոցի վրա Եւ որքան էլ դժվար է փոփոխական միջավայրում գործելը, փոփոխությունները կրթական համակարգում անխուսափելի են և դրանցում նոր մեթոդների ու նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը աներկբա է:

Իսկ ինչ ազդեցություն կունենան ուսուցման վրա նոր մեթոդների կիրառումը,նորագույն տեխնոլոգիաների գործածումը ,բարեփոխված ծրագրերի ,նոր մտահղացումների ներդրումը դպրոցում,պարզ կդառնա ապագայում,բայց որ այսօր դպրցին անհրաժեշտ են բազմակողմանի զարգացած,ինտելեկտուալ հնարավորություններով օժտված ,մասնագիտական ու մանկավարժա-հիգեբանական գիտելիքներով զինված, մարդկային ամենաբարձր որակներ կրող մանկավարժներ,դա անհերքելի փաստ է: Իսկապես դպրոցի դեմքը,ուսուցման որակը,սովորողի տրամադությունը անմիջականորեն կապված է ուսուցչից,առանց որի դժվար է պատկերացնել դպրոցն ու ուսումնական պրոցեսը:

Մեր օրերում ուսուցչի գործունեության հիմնական նպատակ է դառնում ուսումնական ինֆորմացիայի հաղորդումը:Աշակերտը ընկալվում է ուսուցչի կողմից որպես ազդեցության օբյեկտ ,որի խնդիրն է ուսուցչի կողմից հաղորդվող ինֆորմացիայի ըմբռնումը:

Ի տարբերություն սովորական ուսուցչի,

վարպետ Եւ ստեղծագործող ուսուցչին հատկանշական է արագ անցումը սեփական գործունեության նպատակի իմաստավորմանը ,ուսուցողական տեղեկատվության նկատմամբ ստեղծագործական մոտեցման և մարտավարության ճկուն փոփոխման և այլ գործընթացների իրականացմանը ,որոնք բարձրացնում են ուսուցման արդյունավետությունը: Աշակերտների մոտ ստեղծագործական կարողությունների զարգացումը խթան կհանդիսանա աշակերտների ուսումնական գործընթացների ինքնուրույն կատարմանը, ուսումնական նյութի արագ, ստեղծագործական մոտեցմամբ ներկայացնելուն,որով և կկանխվի դասագրքային մտքերի չգիտակցված սերտմանը: Ահա սա է անհրաժեշտ նոր դպրոցին ու ժամանակակից աշակերտին :

Այն դեպքում,երբ ուսումնաճանաչողական գործունեությունը դառնում է աշակերտների ստեղծագործսկան գործունեության հիմքը,այս դեպքում տեղի է ունենում ուսուցման և դաստիարակչական խնդիրների իրական միաձուլում,որին էլ ուղղված է ուսուցչի աշխատանքը:

Մանկավարժը մշտապես աշխատում է աշակերտական կոլեկտիվի, ուսումնական տարբեր խմբերի հետ ,ուստի դասարաններն ու խմբերը կարելի է ձևավորել այնպես, որ ուսուցիչը հնարավորություն ստանա նկատելի չափով ուժեղացնել իր մանկավարժական ազդեցությունը սովորողի վրա :

Մանկավարժի արհեստավարժությունն էլ հենց այն է,որ նա կարողանա հաշվի առնել յուրաքանչյուր կոլեկտիվի կամ խմբի կազմակերպման կոնկրետ կառուցվածքը,գնահատել վերջինիս ներունակ հնարավորություններն ու լավագույնս օգտագործել դրանք աշակերտ-կոլեկտիվ,աշակերտ-խումբ փոխհարաբերություններն ակտիվացնելու համար:

Այսպիսով, աշակերտ-խումբ խումբ-աշակերտ փոխադարձ ներգործությունը անպայման պետք է հաշվի առնվեն մանկավարժսկան խնդիրների ձևավորման, առաջադրման և լուծման գործընթացում:Եթե ընդհանրացնենք,ապա կարելի է ասել, որ մանկավարժը ուսումնական կոլեկտիվում փոխազդում է իր անձնային ու մանկավարժա-հոգեբանական առանձնսհատկություններով ոչ միայն աշակերտների հետ փոխհարաբերվելով,այլեւ այլ մանկավարժների հետ շփումներով ,որոնց շնորհիվ դիտարկման առարկա է դառնում ուսուցչի ձեռք բերած հեղինակությունը և ունեցած ազդեցությունը աշակերտների շրջանում,որոնք գործընկերային (կոլեգիալ) առողջ մրցակցային դաշտ են ստեղծում ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվներում և ուսուցման պրոցեսը դառնում է մրցակցային,որտեղ հաղթանակի գրավականը գիտելիքների մակարդակն է: Սակայն այս նպատակին հասնելու ճանապարհին չպետք է ստորադասվեն միմյանց շահերը ու գործընթացը պետք է իրականանա բարի կառուցողական,միմյանց օգնող, փոխլրացնող միջավայրում:Աշակերտը ուսուցչի համար այսուհետև պետք է դառնա գործունեության սուբյեկտ,ոչ թե ներգործության օբյեկտ եվ իր գործունեության մեջ ուսուցիչը մշտապես պետք է հաշվի նստի աշակերտի կարծիքի հետ,հաշվի առնի նրա հետաքրքրությունները:

Հատկապես կարեւոր է ընդգծել ապացուցված մի տեսակետ.մարդուն կարելի է դաստիարակել բացառապես խոսքի ներգործությամբ (հուզական զգացողության ստեղծման շնորհիվ): Ընդունված է ասել ,որ ուսուցման պրոցեսում ամեն ինչ կախված է բացառապես ուսուցչի ակտիվությունից ,նրա մարմնաշարժումներից,ձայնից,խոսքի կուլտուրայից: Դա ինչ որ չափով ճիշտ է,սակայն ուսուցչի արտաքին ազդակներին պետք է արձագանքի սովորողն իր

ներքին ընկալումներով, ուստի արտաքին ներգործությունները բավարար չեն սովորողի մոտ ընկալման զգացողություն արթնացնելու համար, անհրաժեշտ է, որ ուսուցչի խոսքի ուժը այնքան մեծ լինի ,որ սովորողի մոտ հուզական զգացողություն առաջանա,որն էլ հիմք կտա այդ խոսքի ընկալման, իմացական կարողությունների զարգացման համար: Բացի այդ այս իրավիճակում ակտիվանում է աշակերտը և պարզ է դառնում նրա ընկալած և չընկալած գիտելիքների մակարդակը և ուսուցիչը գնահատելով իրավիճակը կարողանում է գիտելիքների նորովի մատուցմամբ ճիշտ ներկայացնել նոր գիտելիքների իմաստի ընկալումը և հասնել սովորողների մտքերի կշռադատմանը, ուրեմն նաև նոր նյութի յուրացմանը: Այսպիսով ուսուցման պրոցեսի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի խոսքի հաղորդման ուժից և սովորողի ընկալման հուզականության մակարդակից: Ահա թէ ինչու է սիրված ուսուցիչը դառնում գիտելիքի ստացման նախապայման,որովհետև նրա խոսքը արդեն կարևոր է սովորողի համար ու մեծ է նրա ներգործությունը սովորողի վրա, իսկ այս դեպքում իմացական հուզականությունը ևս առկա է սովորողի մոտ:

Ահա թէ ինչպես պետք է փոխարինել ուսուցման հին կոպիտ,խիստ մեթոդները ,նոր իմացական,զգայական ,տրամադրող,բարյացկամ ազդեցության մեթոդներով, որոնք ավելի շահավետ են եւ ուսուցչի եւ աշակերտների համար, այս դեպքում պահպանված է նրանց փոխհարաբերության հարգալից ձևը և բացառվում են կոնֆլիկտները,իսկ ուսուցումը դառնում է գիտելիքների ստացման հաճելի ու անձնային հպարտություն ներշնչող գործընթաց:

Ժամանակակից ուսուցիչը

և ժամանակակից սովորողը ուսուցման պրոցեսի մեջ են ընդգրկվում նոր մեթոդներով,խմբային մեթոդներով,որը հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին շփվել միմյանց հետ և գիտելիքներ փոխանցել միմյանց հենց դասի ժամին,սակայն
նույնիսկ այս դեպքում
ուսուցիչը պարտավոր է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական շահը, հաշվի առնելով որ ուսուցչի առաքելությունը յուրաքանչյուր սովորողի անձնավորության ու
ապագա քաղաքացու ձեւավորումն ու զարգացումն է, հաշվի առնելով նրա անհատա-հոգեբանական առանձնահատկությունները ու ուսուցման
պահանջմունքները Ուսուցիչը նաև անձնական պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր
սովորողի կրթության ու դաստիարակության մակարդակի ապահովման համար ,ուստի ուսուցման բոլոր մեթոդները պետք է ներդնել յուրաքանչյուր
սովորողի գիտելիքների
անհրաժեշտ մակարդակ
ապահովելու համար,դրանով արդարացնելով ուսուցչի
առաքելությունը, ուսուցման նպատակներն ու դպրոցի կարևորությունը անհատի կրթման ու դաստիարակման գործում:
Սակայն, որքան էլ կիրթ ու կարողունակ լինի ուսուցիչը, նա չի կարող իրականացնել իր առաքելությունը,եթե կյանքի պահանջներն ու ուսումնական նպատակները միմյանցից հեռացած
են,եթե ուսուցչի տված
գիտելիքները հակասության մեջ են գտնվում
հասարակության մեջ
ձևավորված մշակութային և բարոյական արժեքներից, եթե ուսուցչին չեն աջակցում կրթական մարմինները ,եթե կրթական համակարգը լիարժեք չի
համապատասխանում իր ժամանակի ոգուն,եթե
դպրոցական կրթական
ծրագրերը չեն ներառում
նյութեր,որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր
անձին,ապագա հասարակության մեջ
կայանալու համար,եթե

դպրոցն ու կյանքը , ուսուցչի պսհանջներն ու աշակերտների ցանկությունները , ծնողների ակնկալիքները դպրոցից եւ ուսուցչի մատուցած գիտելիքները աշակերտներին,,ուսուցչի սոցիալական վիճակն ու
աշակերտի սոցիալական
վիճակը միմյանց հետ
հակասության մեջ են
գտնվում:
Ահա թե ինչու են սկսվել մեր երկրի կրթական
բարեփոխումները,որոնք
դեռ շարունակվում են և այդ բարեփոխումներում կարևոր է հատկապես ուսուցչի
հեղինակության բարձրացման հարցը,որը
կապված է նրա
սոցիալական վիճակի,մասնագիտական գործառույթների, աշխատանքային խնդիրների լուծման,
հասարակության վերաբերմունքի ու այլ
գործոնների հետ:
Այսպիսով ուսուցիչը
կատարում է ուսուցման
գործի նավավարի դերը, որի ուղեկցությամբ երեխան հաջող կնավարկի դեպի գիտելիքների ու
կարողությունների հարուստ ափը ,որը զերծ է
վտանգներից եվ
խոստանում է լավ ապագա յուրաքանչյուր դեռահասի,
պատանու կամ աղջկա
համար:
Ահա այս նպատակներին պետք է ծառայեն կրթական բարեփոխումները:

3.ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

Արդի ժամանակաշրջանում հասարակական զարգացման ևգիտատեխնիկական առաջադիմության բուռն տեմպերը՝ թելադրում են հասարակության անդամների և առաջին հերթին մատաղ սերնդի կրթվածության ու դաստիարակվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Հասարակական պահանջմունք է դառնում ընդհանուր միջնակարգ և ավագ դպրոցի
կրթությունը,աշակերտների ուսուցման ու դաստիարա կության որակի
բարելավումը,դպրոցական կրթության բովանդակության համապատասխանեցումը ՝ գիտության,տեխնիկայի եւ մշակույթի արդի
մակարդակին ու
ոզարգացման հեռանկարներին : Վերոհիշյալ խնդիրների
լուծումը պահանջում է ոչ
միայն ուսուցման պրոցեսի արդիականացման համար նոր մեթոդների և ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ
կիրառում՝ կրթադաստիարակչական
գործընթացում,այլև, որ
ամենակարևորն է.
բարձրացնել ուսուցման պրոցեսի ղեկավարի՝
ուսուցչի մասնագիտական մակարդակը, նրան զինել բարձր հոգեբանական գիտելիքներով, ուշադրություն դարձնելով ուսուցչի անձնային
որակական հատկանիշների վրա, ինչպես նաեւ նրա մանկավարժա-հոգեբանական,կազմակերպչական,ստեղծագործական
հատկանիշների վրա,որոնցից է կախված ոչ միայն ուսուցման պրոցեսի արդյունավետությունը,այլեւ ուսուցչի աշխատանքային հաջողություններն ու մատաղ սերնդի կրթության ու դաստիարակման ՝ ուսուցման պրոցեսի
գլխավոր խնդրի
իրականացումը: Այսհարցում կարեւոր ու առաջնային դերը պատկանում է դպրոցին,որի ղեկավարումը պետք է իրականացվիեն գրագետ ,պրոֆեսիոնալ ,հումանիստական ու
մանկավարժա-հոգեբանական սկզբունքներով, որոնց շնորհիվ նպաստավոր
պայմաններ կստեղծվեն
ապագա սերնդի ուսուցման պրոցեսի արդյունավետ իրականացման համար: Ահա այս նպատակների համար է,որ վերջին տարիներին բարեփոխումները ՝

դպրոցներում , փոխարինում են մեկը մյուսին,և կրթության մեջ նորի,արժեքավորի որոնումները պատճառ են դառնում կրթական համակարգի անընդհատ փոփոխության ,որը չնայած դժվարություններ է ստեղծում դպրոցի և ուսուցչի համար, բայց փոփոխությունների պրոցեսը թարմացնում է ուսուցման պրոցեսը, կենդանություն է հաղորդում այդ պրոցեսին:

Այս նպատակների իրագործման համար դպրոցին պետք է բազմակողմանի զարգացած, ինտելեկտուալ հնարավորություններով օժտված,մասնագիտական ու մանկավարժա-հոգեբանական գիտելիքներով օժտված , մարդկային ամենաբարձր որակներ կրող մանկավարժներ:

ԳԼՈՒԽ - *3*

- - - - - - - -

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՂԵԿԱՎԱՐ

--- --- --- --- --- --- --- --- --- --- --

Պար.-

----

4. ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

Ուսուցչի մասնագիտությունը հավերժական,չխամրող, ժամանակի մեջ երբեք չանհետացող մասնագիտություն է,քանի որ նրա գործը,

առաքելությունը նոր սերնդի
դաստիարակությունն է,
մարդկության մեծագույն առաքելություններից մեկը,
իսկ նրա աշխատանքի
օբյեկտը երեխան է:
Մանկավարժական մասնագիտության կարևոր առանձնահատկություններ-
ից մեկն էլ այն է,որ ուսուցիչը մշտապես
գտնվում է բազմաբնույթ սոցիալական կապերի (գործընկերային,ծնողական,աշակերտական) շփումների կիզակետում,որն էլ նրա համագործակցային ,հաղորդակցական դերակա
տարությանը բազմաբնույթ ու բազմակողմանի առումով ավելի խորը մանկավարժա-հոգեբանական բովանդակություն է հաղորդում:
Ուսուցչի մասնագիտությունը հատկանշվում է իր հումանիստական ուղղվածությամբ:
Հիրավի,աշխարհում երբեւէ եղած մասնագիտություններից ամենամարդասիրականն է մանկավարժի մանագիտությունը ,քանի որ ուսուցիչն իր աշխատանքում հիմնականում գործ ունի երեխայի անձնավորության հետ: Իսկապես ուսուցիչը մի կողմից օգնում է ,որ իր սաների վարքը շտկվի եւ հարմարացվի կյանքի պահանջներին, մյուս կողմից ձեւավորում է նրանց անհատականությունը ,
համախմբում նրանց մտավոր եւ ստեղծագործական ուժերը:Այդպիսի հումանիստական ,երեխայակենտրոն մոտեցմանը որպես անխախտ հավատամք ,իրենց ողջ գիտակցական կյանքի ու մանկավարժական գործունեության ընթացքում ,հարազատ մնացին Խ.Աբովյանը ,Պեստալոցցին,Լ.Ն.Տոլստոյը
,Ա.Ս.Մակարենկոն,Վ.Ա.Սուխոմլինսկին,ամերիկյան մանկավարժներ Կ.Ռոջերսը,Ջ.Դուին եւ ուրիշներ:
Ուսուցչի առաջնահերթ խնդիրը Վ.Սուխոմլինսկին տեսնում էր այն բանում,որ կարողանա ձեւավորել յուրաքանչյուր երեխայի անհատականությունը,քանզի նա յուրաքանչյուր երեխայի համարում էր մի "ուրույն աշխարհ":
Սուխոմլինսկին ասում էր.
"ճանաչել,բացահայտել եւ զուգորդել ,վեր հանել յուրաքանչյուր երեխայի անհատական ձիրքերը,տաղանդը-նշանակում է բարձրացնել

անձնավորությանը մարդկային արժանապատվության բարձրագույն մակարդակին”:

Անձի ձեվավորումը համարելով ամենակարեւորը ուսուցչի աշխատանքում, ժամանակակից հումանիստական մանկավարժության եւ հոգեբանության հիմնադիրներից մեկը ,Կարլ Ռոջերսը ժամանակակից մանկավարժներին զգուշացնում էր .հեռու մնալ երեխայի ինքնուրույն մտածողությունը եւ անհատականությունը կորցնելու վտանգից ,որն առաջանում է այն դեպքում, երբ ուսուցիչն իր մանկավարժական գործունեությունը հարմարեցնում է աշակերտների կոնկրետ ձգտումներին,դրանով իսկ նա ավելի քիչ է հանդես գալիս որպես հումանիստ ու բարոյականության դաստիարակ :

Մանկավարժական մասնագիտության համար հատկանշական է այն,որ այդ գործունեությունը միտված է ապագային: Այսօրվա երեխայի մեջ ուսուցիչը նախագծում է այնպիսի որակներ,ինչպիսիք իր աշխատանքի արդյունքում պետք է ձեւավորվեն ապագայում: Այս առումով էլ մանկավարժական աշխատանքի արդյունքը անմիջականորեն չի երեւում, միայն անհատի հետագա ապրած կյանքը ցույց կտա ,թէ ինչպիսին կլինի նրա վարքագիծը,ինչպիսի դրական որակներով է նա օժտված:

Ուսուցչի աշխատանքի ստեղծագործական բնույթը նրա մասնագիտության կարեւոր առանձնահատկություններից է:Դա արտահայտվում է նրանում ,թէ որքանով է ուսուցիչը ձգտում հնարավորին չափով լրիվ իրացնելու իր ներուժը մասնագիտական գործունեության մեջ,որն էլ բնութագրում է նրա անհատականությունը եւ պլանավորում նրա հեղինակային մանկավարժական ոճը (Ս.Ա.Սմիրնով):

Ուսուցչի անհատականության վառ դրսեւորումներից առաջին տեղում պետք է լինի հոգու հարստությունը ,ներքին կուլտուրան ,վառ անհատականությունը եւ այն թէ ինչպես է ընկալում դասի ու դասարանի իրավիճակը եւ գնահատում յուրաքանչյուր երեխայի ուսումնական ջանքերը, դրանով իսկ ձեւավորվում է իր սաների վերաբերմունքը նրա նկատմամբ, եւ դառնում է ուշագրավ ու հետաքրքիր անձնավորություն իր սաների աչքում եւ արժանանում է իր սաների ակնածանքին,բացառիկ հարգանքին ու սիրուն եւ ձեռք բերում մեծ հեղինակություն ու իր իսկ կերպարով ու խոսքով ստեղծվում են մեծ հնարավորություններ իր սաների կրթման ու դաստիարակման գործը հաջող իրականացնելու համար: Այսպիսի մանկավարժական հեղինակության ուսուցիչը հասնում է շնորհիվ նրա ,որ մշտապես աշխատում է իր վրա եւ

որպես ստեղծագործող անհատականություն զբաղվում է իր ինքնազարգացմամբ ու ինքնակատարելագործմամբ
Մանկավարժական գործունեությունը գնահատվում է որպես բարդ ու դժվարին ֆիզիկական եւ մտավոր աշխատանք,որի արդյունքում արարվում է աշխարհում մեծագույն արժեքը մարդ-անձնավորությունը:

Մանկավարժությամբ զբաղվելը նաեւ բարդ ու պատասխանատու ,կազմակերպչական եւ նորարական ու հետազոտական գործունեություն է ,որը պահանջում է բազմակողմանի զարգացում, մեծ նվիրում,մանկավարժական ու հոգեբանական գիտելիքների իմացություն, ներքին բարեկրթություն,հոգու բարություն ,սեր երեխաների նկատմամբ: Ոի այսպիսի հատկություններով օժտված մասնագետի,մանկավարժի աշխատանքը եւ նրա մարդ դաստիարակելու շատ կարեւոր հասարակական առաքելությունը դեռեւս չի ստացել իր արժանի գնահատականը :Իսկ նրա սոցիալական կացության ու աշխատանքի բովանդակության գնահատումն ու նրա մասնագիտության արժևորումն ու
հեղինակության բարձրացման հարցերն
այսօր ավելի քան հրատապ
են ու անհետաձգելի,
որովհետև հենց այս
հարցերի լուծումը կտա
ապագա
հասարակության բարեկիրթ կենսակերպի ու
զարգացվածության մակարդակի բարձրացման բավարար եւ ընդունելի
կարգավիվիճակ եւ ուրեմն
նաեւ պետությունների
հզորացման ու մարդկանց
կյանքի բարելավման
հնարավորություն:
Ահա թէ ինչու է մեր
ժամանակների պահանջված հրամայական այն հարցը,որ ուսուցիչն իր երկրում պետք է
արժանանա ամենայն

հարգանքի և գնահատման,նրա նյութական վիճակը պետք է բարվոք լինի,կենսամակարդակը բարձր,իսկ հեղինակությունը մեծ, որովհետեւ նրա աշխատանքով է
ձևավորվում ապագա և ներկա հասարակությունը,նրա կերպարը մատաղ սերնդի ոգեշնչման աղբյուրն է, նրա գործը հպարտության ու երախտագիտության արժանի է, իսկ անունը յուրաքանչյուր մարդու սրտում է,նա կատարում է շատ պատասխանատու,նյարդային և հոգեկան մեծ լարում պահանջող աշխատանք, բայց նրա սոցիալական մակարդակը շատ ցածր է,նյութական հնարավորությունները քիչ են,կյանքի պայմանները ոչ բարվոք և նրա
կենսամակարդակը շատ
հեռու է բավարար լինելուց և դեռ այս վիճակը
փոփոխման միտում չունի և որքան էլ ուսուցիչն իր սաների մեջ ներարկում է ապագայի նկատմամբ լավատեսություն,այսօր նա ապագայի նկատմամբ լավատեսություն չունի:Սակայն առանց լավատեսության և վաղվա օրվա նկատմամբ լուսավոր հավատի,մարդն անկարող է արարել,ստեղծագործել: Իսկ ուսուցիչը կարող է արդյոք արարել ու իր ուսերին կրել մատաղ սերնդի դաստիարակման հույժ կարևոր
առաքելությունը, հնարավո՞ր է արդյոք իրականացնել
ապագա սերնդի կրթման ու դաստիարակման կարևոր առաքելությունը,եթե իր սոցիալական վիճակով ցածր է հասարակության միջին խավից,եթե իր կյանքի պայմանները խաղաղ հոգեվիճակ չեն ստեղծում նրա համար :Այո հնարավոր չէ, բայց ուսուցիչը կարող է իրականացնել իր երդվյալ
առաքելությունը, որովհետեւ նրա մասնագիտությունը նվիրում է պահանջում,իսկ կոչումը պատասխանատվություն եւ այս արժանիքները կրելով ոչ միայն իր սաների մեջ է ապագայի նկատմամբ հույս ու հավատ է
արթնացնում,այլև ինքն է
հավատում և հույսով
սպասում,որ կգան լավ օրեր և իր աշխատանքն ու
անունը բարձր
գնահատանքի
կարժանանա:

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

--- --- --- --- --- --- --- --- ---

ՈՒսուցչի մասնագիտական ,մանկավարժական առաքելությունը սովորողների ուսուցումը,
կրթությունը և
դաստիարակությունն ու
զարգացումը իրականացնելն է:
Սակայն ուսուցչի դերը ավելի շատ սովորողների
ուսուցմանն ու
դաստիարակությանը ուղղություն տալը պետք է լինի, քան անմիջականորեն պետք է ուսուցանի ուսուցիչը: Սա նշանակում է ոչ թէ
սովորեցնել ա՛յլ ղեկավարել սովորելու գործընթացը,ոչ թէ դաստիարակել,այլ ղեկավարել դաստիարակության գործը-ահա սա պետք է լինի մանկավարժի մասնագիտության հիմնական գործառույթը:
Այս գլխավոր խնդրի
կարևորությունը գիտակցելով, ուսուցիչը
ինքնուրույն նախաձեռնության և ազատություն է տալիս իր սաներին ,ինքն ինչ-որ չափով մնալով կուլիսների ետեվում, իրականում
դառնալով ուսուցման
պրոցեսի և իրականացնողը և կառավարողը:
Ռուս մանկավարժ,գիտնա- կան Ի.Պ. Պոդլասը ասում էր. այն բոլոր
աշխատանքները,որ ուսուցիչը պետք է կատարի իր ուսուցման գործընթացում (դաս,դասղեկի ժամ,օլիմպիադա, էքսկուրսիա,արշավ,դասա-
լսում և այլն), նա պետք է ղեկավարի և իրականացնի գրագետ,խելացի և
նրբորեն,որոնց շնորհիվ
բարձր կլինի ցանկացած
միջոցառման արդյունավետությունը:
ՈՒսուցման պրոցեսի
ղեկավարման առաջին
փուլը նշանավոր
մանկավարժ Պոդլասը
համարում է.
-նպատակադրումը ,ուսուցման գլխավոր
նպատակի բացահայտումը:
ՈՒսուցման պրոցեսի

կառավարումը հիմնվում է
առաջին հերթին
աշակերտների գիտելիքների վրա,նրանց
իմացության, հնարավորությունների ,դաստիարակվածության ու
զարգացման որոշակի
մակարդակի վրա ,որը
բացահայտվում է ախտորոշմամբ:
Առանց աշակերտների բնաախոսական (ֆիզիոլոգիական) և հոգեբանական զարգացման առանձնահատկությունների, մտավոր և բարոյական
դաստիարակվածության
մակարդակի իմացության մանկավարժը չի կարող կրթադաստիարակչական գործընթացի ղեկավարման գործում հաջողություններ ունենալ:
Ուսուցման մեջ
ախտորոշմանը հետևում է կանխատեսումը: Ուսուցիչը պետք է կարողանա
կանխատեսել իր
գործունեության արդյունքներըորոշել իր
աշխատանքի
ռազմավարությունը ,գնահատել ձեռք բերվածը, թե որակական և թե քանակական առումով: Այս առումով կարելի է ասել.
այն մանկավարժը որը չի կսնխատեսում վաղվա օրը ,չի նայում առաջ եւ չգիտի թե ինչի է ինքը ձգտում,նման է ծովում աննպատակ
դեգերող նավի,որը
պատահական է ափ
հասնում:
Ուսուցչի գործունեության մեկ այլ կարևոր դերը
մանկավարժական
գործունեության առաջիկա
մոդելի նախագծումն է
նպատակադրված գործունեության իրականացման համար հնարավոր միջոցների,հնարների ընտրությունը,ստացված արդյունքների գնահատումը եւ այլ գործառույթներ:
Այսպիսով մանկավարժական գործընթացի նախապատրաստման հիմնական փուլերն են.
ա). Ախտորոշումը

բ). Կանխատեսումը

գ).Նախագծումը

Եթե ախտորոշման շնորհիվ պարզաբանվում է ուսուցման գործընթացի էությունը, իսկ
կանխատեսման շնորհիվ
բացահայտվում են
հաջողություններն ու
թերությունները կապված
ուսպւցման գործընթացի
հետ,ապա նախագիծը հիմք
է դառնում ուսումնադաստիարական աշխատանքի պլանի համար,որով ավարտվում է մանկավարժական գոործընթացի նախապատրաաստական փուլը: Այս դեպքում ուսուցիչը դասարան է մտնում ճշգրիտ բոլոր մանրմասնություններով մշակված ուսուցման պլանով,որը կարող է թէ գրավոր ունենալ եւ թէ անգիր հիշել:

Ուսուցչի մասնագիտական գործառույթների մեջ է մտնում նաև
տեղեկատվական
(ինֆորմացիոն)գործառույթը, որը հանգում է այն
գաղափարին,որ սովորողների համար հենց ուսուցիչն է տեղեկատվության գլխավոր աղբյուրը ,սակայն այս գործառույթը արդեն որոշ չափով համացանցն է կատարում աշակերտները այժմ արդեն իրենց անհրաժեշտ ինֆորմացիան ստանում են համացանցից:

Ուսուցչի կազմակերպչական դերը արտահայտվում է աշակերտներին այս կամ այն գործունեության մեջ ներգրավելով :

Ուսուցիչը համագործակցում է նաև իր գործընկերների, կրթության ոլորտի այլ մասնագետների հետ: Այդ
հաղորդակցությունը
, գաղափարների
փոխանակումը , համատեղ ստեղծագործելը ,նորարական մոտեցումներ ,առաջարկներ անելն ու փոխանակելը փոխհարստացնում են մանկավարժներին եւ մղում նորանոր ստեղծագործական որոնումների:

Ստուգողական-գնահատող դերը ,որ իրականացնում է ուսուցիչն իր աշխատանքի ընթացքում կարևոր է ոչ
միայն աշակերտների

հաջողությունները նկատելու գնահատելու համար ,այլեպարզելու անհաջողությունների ու
ձախողումների պատճառները : Հավաքված տեղեկատվությունը նրան թույլ է տալիս վերանայել իր մանկավարժական գործընթացը ,ներմուծել
արդյունավետ աշխատանքի իրականացման նոր
մեթոդներ,տեխնոլոգիաներ և միջոցներ:
Ինչպես ամեն մի
աշխատանք,այնպես էլ
ուսուցչի աշխատանքը
պետք է ավարտվի արվածի ու չարվածի վերլուծությամբ ,պարզաբանելով ,թե ինչն էր լավ ,ինչն էր վատ ,որն էր բացթողումը և վերջապես ինչ անել ուսուցման
պրոցեսում առավել մեծ
արդյունքի հասնելու համար:
Ահա թե որքան բազմաբնույթ է ուսուցչի
մասնագիտությունը.ուսու-
ցիչը և՛ մանկավարժ է և՛ հոգեբան և՝ կազմակերպիչ:



ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԸ

--- --- --- --- --- --- --- ---

ՈՒսուցչի անձնային որակներ ասելով հասկանում ենք ուսուցչի քաղաքացիական ու մարդկային հատկանիշների ամբողջությունը, որոնցով ձեվավորվում է ուսուցչի անձնային կերպարը:

ՈՒսուցչի կերպարի մեջ կարեւոր հատկանիշներ են.

-մարդասիրությունը

-արդարացիությունը,

-ազնվությունը,
-լավատեսությունը,
-բարյացկամությունը ,
-ինքնատիրապետումը,
-արժանահավատությունը,
-օբյեկտիվությունը,
-հումորի զգացումը,
-սերը ուուսուցման
գործընթացի նկատմամբ,
-հայրենասիրությունը,
-ակտիվությունը,
աշխատասիրությունը,
-ստեղծագործական կարողություններըեւ այլն:
Շարունակ գտնվելով դպրոցական առօրյայի ամենօրյա իրադարձությունների կենտրոնում, ուսուցիչը նաեվ կազմակերում է երեխաների շփումը, փոխհաղորդակցումը ` հանդես բերելով նուրբ տակտ, շփման կուլտուրա, դրանք համատեղելով ուսումնական նյութի
մատուցման հետ:
Կրթական գործընթացը
իրականացնելիս աչքի
պետք է զառնի ուսուցչի
հնարամտությունը, ներըմբռնողությունը, մշտապես նորը
հայտնագործելու կարողությունը, ուսուցչի **ներըմբռնողությունը** (ինտուիցիան), մարդկային նրբագույն ըմբռնման մի
հատկանիշ է,որը հուշում է
մարդուն իր ճիշտ անելիքը , որը , որը բնորոշում է անձի կրթվածության ու
անձնական բարձր
կուլտուրայի մակարդակը: Ուսուցչի ինքնատիրապետումը,զսպվածությունը հնարամտությունը, ստեղծագործելու կարողությունները օգնում են նրան չպլանավորված, անկանխատեսելի իրավիճակներում ելք գտնել ու կարողանալ իրավիճակը ղեկավարել ու կայունացնել դասն այնպես կարծես ոչինչ չի եղել:
Ուսուցիչը պետք է
զարգացնի իր սաների

հաղորդակցական կարողությունները , շփման
կուլտուրան , մարդասիրական մոտեցումը, նրանց հետ
հաղորդակցվելիս պետք է
զուգակցի իր խելացի
, չափավոր
պահանջկոտությունը , իսկ
պահանջների մեջ դյուզն
իսկ թերացումն ու
անհետեւողականությունը
իջեցնում է ուսման
նկատմամբ աշակերտների
պատասխանատվությունը՝
ազդելով նաեւ ուսուցչի
հեղինակության վրա:
Մանկավարժական հեղինակությունը դրսևորվում է աշակերտների վրա նրա ունեցած ազդեցությամբ: Լավ
ուսուցիչը դառնում է վարքի կուլտուր-մոդել, իդեալ, նրա անձն ինքնին ուսումնական գործունեության համար
գլխավոր շարժիչ ուժ է, նրա վերաբերմունքն ու վարքագիծը շատ ավելի մեծ ազդեցություն են գործում աշակերտների վրա, քան դասագրքերը, ուսուցման միջոցներն ու մեթոդները միասին վերցրած:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

ՈՒՍՈՒՑՉԻՍ ՍԻՐՈՎ
ԳԻՏԵԼԻՔ ՍՏԱՑԱ
ՆՐԱՆ ՍԻՐԵԼՈՎ
ՈՒՍՈՒՑԻՉ ԴԱՐՁԱ
****
Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ուսուցիչն իր աշխատանքում ներկայանում է իր անձնային ու մասնագիտական կերպարով, որն էլ հիմք է տալիս մանկավարժական

աշխատանքը իրականացնել իր անձնային դիրքորոշումներով և մասնագիտական գիտելիքներով:

Ուսուցիչն իր աշխատանքում ստիպված է կիրառել ոչ միայն անձնային դիրքորոշումներ ու մասնագիտական գիտելիքներ, այլեւ մանկավարժական տեխնիկա .

-ուսուցչի ձայնը

-խոսքի կառուցումը

-դիմախաղը

-արտահայտիչ շարժումները

-հաղորդակցվելու կարողությունները

-հոգեվիճակն ու հույզերը կառավարելը այն անձնային ու մանկավարժական տեխնիկական միջոցներն են, որոնցով ներկայանում է ուսուցիչը իր մասնագիտական գիտելիքները հաղորդելիս:

Ուսուցչի մանկավարժական գործունեության կարեւոր դրսեւորումներից են.

-մանկավարժական տակտը՝ երեխաների հետ շփվելու արվեստը,

-շփման ճիշտ տոն ու ոճ ընտրելու կարողությունը:

-երեխաների հետ շփվելիս շատ կարեւոր է պարզությունը եւ բնական պահվածքը:

- վերամբարձ տոնը կամ խոսքի արհեստականությունը , ընդհակառակն, վանում են աշակերտներին եւ շփումը նրանց միջեւ դժվարանում է:

Ուսուցչի ոգու ջերմությունը ,խոսքի մեղմ ու զուսպ տոնը, նրա հարգանքն ու նրբանկատությունը ՝ աշակերտի անձի նկատմամբ թույլ են տալիս լավ հարաբերություններ հաստատել թե կոլեկտիվի թե առանձին անհատների հետ, հասնել ակտիվ համագործակցության և առողջ փոխըմբռնման:Այստեղ տեղին է հիշել հայտնի մանկավարժ Յանոշ Կորշակի հետևյալ թևավոր մտքերը. « երեխայի նկատմամբ անհրաժեշտ է ոչ միայն ձեռքի ջերմություն, այլև հոգու կամ « Ուզում ես տիրապետել երեխայի հոգուն, տուր նրան քո ձեօքը»:

Ուսուցչի անձի մասին հետաքրքիր մտքեր է ասում հայ հոգեբան-մանկավարժ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԸ .

«Ուսուցչի անձնային կերպարը աշակերտների բնավորության ձեւավորման ,նրանց կրթության ու դաստիարակության իրականացման համար ամենակարևոր գործոնն է: Ուսուցման բոլոր կանոնները, պահանջները ոչինչ են, եթե ուսուցիչը չի սիրում աշակերտներին, չի ոգևորվում իր պաշտոնով, չի

գործում պարտականության գիտակցումով և չունի ամուր, ամբողջական նհետևողական բնավորություն:

Անձի առանձնահատկությունները ,դրա որակային

հատկանիշները գուցէ ոչ մի պաշտոնի մեջ այնքան անհրաժեշտ չէն, որքան ուսուցչի համար , ուստի և ամեն կերպ պետք է նպաստել ուսուցչի անհատականության ազատ զարգացմանը...»:

Հին դպրոցական համակարգում , որն արդեն բարեփոխվել է, աշակերտի անձը, իրավունքներն ու ցանկությունները ստորադասված էին ուսուցիչների անձնային կերպարի նկատմամբ, իրավունքների ու ցանկությունների նկատմամբ, որն իր հետ բերում էր խնդիրներ, աշակերտին վանելով դպրոցից և ուսուցիչներից:

Ուսուցչի անձնային կերպարին ներկայացվող պահանջները լավ է ներկայացրել հայ մանկավարժ, պրոֆեսոր Ա.ԲԱԼՅԱՆԸ.

«Ուսուցիչ-դաստիարակը պետք է տիրապետի մանկավարժական տեխնիկային, որն օգնում է իր մեջ ձևավորելու դասարանի պայմաններում բնականորեն ,անկաշկանդ գործելու , ավելորդ լարվածությունի հանելու կարողություններ; Մանկավարժի մասնագիտական տեխնիկային տիրապետողից պսհանջվում է վարքագծի բնական հանգստություն և հավասարակշռություն:

Այսպիսով , ժամանակակից դպրոցում աշխատող ուսուցիչներին ներկայացվում են հետևյալ ընդհանրսական պահանջներ.

1).**Ուսուցիչը պետք է օժտված լինի մարդկային բարձր որակներով .**

-բարությամբ

-սկզբունքայնությամբ

-ճշտապահությամբ

-արդարամտությամբ

-բարձր բարոյականությամբ և այլ արժանիքներով:

2).**Ուսուցչի արտաքին տեսին ու կեցվածքը մեծ ազդեցություն է թողնում դասապրոցեսի վրա**

3).**Ուսուցչի խոսքը պետք է լինի գրագետ,համակարգված, հնչի որոշակի տոնայնությամբ, պարզ ու հասկանալի,** լինի հակիրճ ձևակերպված, այն պետք է իր մեջ պարունակի ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև երեխայի հոգուն մոտ գնահատվող կամ թերագնահատվող

խոսքեր: ***4.ՈՒսուցիչն իր պահվածքով, ապրելակերպով*** օրինակ է աշակերտներին:

5.ՈՒսուցչի մասնագիտական հատկանիշները կարևոր են ուսուցման պրոցեսի արդյունավետության համար:

6). ՈՒսուցիչը պետք է օժտված լինի բարձր մանկավարժա-հոգեբանական հատկանիշներով 7).ՈՒսուցիչն իր աշխատանքում պետք է բացառի երեխայի նկստմամբ ունեցած անբարյացկամությունը, չարամտությունը,պատժելիությունը

ՈՒսուցիչը պետք է հասնի նրան , որ դառնա .

- Բազմակողմանի զարգացած մարդ
- Դասապրոցեսի միանձնյա ղեկավար
- Երեխայի համար հեղինակություն

ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

****

Տարիներ առաջ էր...
Աստծո կամոք
Դպրոցի ճամփեն
Բռնեցի կրկին:
Ձեռքս դրեցի
Ամենայն սիրով
ՈՒսուցման ծաղկի
. Քնքուշ թերթերին : . ՈՒ ծաղիկն այդ
Սիրով բացվեց,
Ժպտաց ամենքին:
ԵՎ նրա բույրն առա
Հոգուս թրթիռով:
ՈՒ կյանքս այսպես
Ծաղկի հմայքով ,
Բերկրանք բերեց
Մանուկ սրտերին :
****

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՎ Է ՆԱ...

-- -- -- -- -- -- -- -- -- -- -- --

Ուսուցիչն

այն անձնավորությունն է,որ կազմակերպում ու ղեկավարում է սովորողների ուսուցման պրոցեսը եվ կրում է անձնական պատասխանատվություն սովորողների գիտելիքների մակարդակի համար, նրանց մեջ ձեվավորած համամարդկային կերպարի,անձնային արժեհամակարգի ու հասարակական դիրքորոշման համար:

Այս ամենին հասնելու համար ուսուցիչն իր աշխատանքում հաղորդում է ոչ միայն առարկայական գիտելիքներ, այլև իրականացնում է դաստիարակչական աշխատանքներ, որպեսզի սովորողների անձնային առանձնահատկություններն ու սոցիալական կյանքում ձեռք բերած սովորույթները, վարքագծային առանձնահատկությունների բացասական հատկանիշները եվ ընտանեկան դաստիարակության ոչ լիարժեք արժեհամակարգը չազդեն ուսուցման պրոցեսի արդյունավետ իրականացման վրա: Այսինքն յուրաքանչյուր ուսուցիչ իր աշխատանքում իրականացնում է և ուսուցում և դաստիարակություն,

դառնալով երեխայի կյանքի «ճարտարապետն» ու «հոգու շինարարը»:

Եվ պատահական չէ, որ ուսուցչի կերպարը միշտ ուղեկցում է յուրաքանչյուր սովորողի իր կյանքի ուսումնական շրջանում, նրա դպրոցական և պատանեկան տարիքում ու ապագա կյանքում և մնում մշտապես նրա հուշերում :

ՈՒ ինչ էլ դառնա յուրաքանչյուր մարդ, նրա կյանքի նավն ու նավարկության վայրը ընտրվել է նրա սիրած ուսուցչի ու նաև չսիրած ուսուցչի անձնային կերպարի ու մասնագիտական գիտելիքների ազդեցության ներքո, նրա մարդկային ու մանկավարժական կերպարի ներքո է ձևավորվել յուրաքանչյուր սովորողի, ապագա քաղաքացու, մարդու անձնավորությունը ,

անձնային կերպարը:

Ահա թե ով է ուսուցիչը :

ՈՒսուցչի անձնային ու մասնագիտական կերպարը մեծ ազդեցություն է թողնում յուրաքանչյուր սովորողի ուսուցման պրոցեսի վրա եվ ուրեմն ուսուցչի կերպարով է հենց պայմանավորված սովորողի անձնային վարքագիծը և ուսումնական դիրքորոշումը.

-ուսուցման ցանկությունները -հետաքրքրությունները, -գիտելիքներն ու -կարողունակությունները և -դասի ու գիտելիքի,

- դպրոցի ու իր ապագայի նկատմամբ դրսևորած նրա վարքագծային դիրքորոշումները:

ՈՒ գաղտնիք չէ նաև այն, որ մանկավարժության մեջ ընդունված է, որ և ծնողի և ուսուցչի խոսքը կշիռ չունի, եթե չկա ծնողի և ուսուցչի փայլուն անձնային օրինակը ՈՒրեմն անձի ձևավորման վրա մեծ դեր ունի նրան դաստիարակողի և

ուսուցանողի անձնային կերպարը, նրա բարոյական ու հասարակական, համամարդկային արժեհամակարգը, կյանքի, շրջապատի, հասարակության նկատմամբ ունեցած դիրքորոշումները, ինչպես նաև այն առարկայական գիտելիքների պաշարի կրող լինելը, որի մատուցման համար ունի մասնագիտական իրավունքներ, որոնք կամբողջացնեն ուսուցիչ մասնագիտության անձնային ու մասնագիտական կերպարի առանձնահատկությունները,որոնք էլ կդառնան այն արժեքները, որ կհանդիսանան մանկավարժական գործի կազմակերպման նախադրյալներ:Ահա թե ինչու է կարևորվում ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարը ,որը մանկավարժական գործի հենասյունն է,

դպրոցահասակ երեխայի հպարտության ու ոգեշնչման աղբյուրն է ու նրա հաջողակ ապագայի առհավատչյան:

ԵՎ ահա թէ ինչու եմ կարեվորում ուսուցչի կերպարը ու ինչու եմ ընտրել այս թեման, այն համարելով մանկավարժական աշխատանքի իրականացման գլխավոր չափանիշը, որը բնորոշում է ուսուցման մակարդակը, եվ ուրեմն այս թեման ընտրել եմ որպես ուսուցման պրոցեսի շարժիչ ուժ, որը կներկայացնի այն բոլոր առանձնահատկությունները որոնք բնորոշում են ուսուցման պրոցեսը և վեր կհանի այն խնդիրները, որոնք առաջանում են այս թեմային բնորոշ իրավիճակներում :

Թեման կշարադրեմ որպես հանրակրթական դպրոցի գլխավոր գործառույթի՝ ուսուցման պրոցեսի արդյունավետ իրականացման ուղիներից մեկը, որպես սովորողի գիտելիքների երաշխավորի վկայություն,որպես ուսուցման ու դաստիարակության պրոցեսների շարժիչ ուժ: Թեմայի ընտրությունը իրականացրել եմ այսպիսին, նախ որովհետև դպրոցի ու
մանկավարժական
աշխատանքի գլխավոր դեմքը ուսուցիչն է, իսկ նրա կերպարը հանդիսանում է ուսուցման պրոցեսի խորհրդանիշ, բացի այդ ես կփորձեմ իմ օրինակով ու իմ հետազոտական աշխատանքով ներկայացնել ուսուցչի դերը դպրոցում եվ նրա միջոցով սովորողներին տրվող համամարդկային արժեքների ու առարկայական գիտելիքների պաշարը, որ մատուցվում է սովորողին ուսուցման պրոցեսում: Աշխատանքս կկրի մանկավարժա-հոգեբանական ինքնուրույն գիտական աշխատանքի մի համակարգված ու ժամանակակից սովորողների հետ իրականացված զրույցներից քաղված հետազոտական աշխատանքների հավաքական մի հոդված, որը կիրականացնեմ կառուցվածքային հերթագայությամբ,մտքերի պարզ շարադրմամբ ,գիտական հիմքով,
տեսական հիմնավորումներով ու գործնական հետազոտություններով,

Եվ իմ այս հետազոտական աշխատանքում կփորձեմ ներկայացնել ուսուցչի կերպարի վերաբերյալ ոչ միայն դասական մանկավարժության տեսակետները, այլև ժամանակակից ու ավանդական դպրոցի առանձնահատկությունները, ինչպես նաև հենց իմ , մանկավարժիս կարծիքը,մտքերն ու դիրքորոշումները:

Ուսուցչի,ժամանակակից ուսուցչի կերպարի մասին մտքերս կներկայացնեմ օգտվելով նաև աշակերտների և ուսուցիչների հետ կատարված

հետազոտական աշխատանքների արդյունքներից, կներկայացնեմ նաև իմ աշակերտների ժամանակակից հայացքներն ուսուցիչների մասին եվ հենց ուսուցիչների կարծիքները իրենց մասին, որոնք կամբողջացնեն ուսուցչի կերպարն ու կբացահայտեն նրա դերի ու կերպարի առջև ծառացած խնդիրները,

որոնց մի մասը կային, մի մասն էլ առաջացել են ժամանակակից դպրոցում և ուսուցման նոր մեթոդների շնորհիվ ու նոր կրթական համակարգում:

նոր կրթական չափորոշիչների ու հասարակության պահանջներից ելնելով , կներկայացնեմ նաև ժամանակակից դպրոցի այն դրական կողմերը, որոնք նպաստել են ուսուցչի կերպարի վերագնահատմանն ու վերաարժևորմանը, ինչպես նաև այն առավելությունները որոնք տվել են ժամանակակից դպրոցն ու հասարակությունը, մեր պետության կրթական գործընթացի նկատմամբ ձեվավորած կրթական նոր քաղաքականությունը և դրա արդյունքում ձևավորված նոր կրթական չափորոշիչներն (ԿՊՉ) ու նոր կրթական բարեփոխումները, որոնք նպատակ են ունեցել ոչ միայն միջոցներ ձեռնարկել կրթության գործընթացի արդյունավետության բարձրացման համար,այլև կարևորելով ուսուցչի դերը հասարակության կենսամակարդակի բարձրացման հարցում եվ հզոր պետության կառուցման գործում, մշակել են նոր մոտեցումներ ու կառուցվածքային փոփոխություններ , որոնք կնպաստեն ուսուցչի սոցիալական վիճակի բարելավմանը, նրա կրթական մակարդակի բարձրացմանն ու հասարակության մեջ ուսուցչի դերի գնահատմանն ու նրա կերպարի արժեվորմանը:

Թեմայիս հետազոտությունը չպետք է լինի ինքնանպատակ,այն պետք է վեր հանի ուսուցչի վեհ կերպարի կայացման խոչընդոտները ու դրանց համար լուծումներ առաջադրի,դրանք հասցնելով մեր երկրի կրթության գործընթացի կազմակերպիչներին, ակնկալելով, որ մեր երկրի կրթական համակարգում փոփոխություններ կլինեն նաև իմ հետազոտական աշխատանքների շնորհիվ ու իմ մանկավարժական դիրքորոշումներով:

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉԸ

- - - - - - - - - - - - - -

ՆԱ ԳԵՂԵՑԻԿ ԷՐ,ՀՄԱՅԻՉ,

ՆԱ ԳԵՂԵՑԻԿ ԷՐ ԽՈՍՈՒՄ,

ՆԱ ԱՄԵՆ ԻՆՉ ԳԻՏԵՐ,

ՆՐԱ ՀԱՅԱՑՔԸ ՎԵՀ ԷՐ,
ՆՐԱ ՀՈԳԻՆ ԲԱՐԻ ԷՐ,
ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ՈՒՍՈՒՑԻՉ Է,
ՆԱ ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑ-
ՉՈՒՀԻՆ ԷՐ .
ԸՆԿԵՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԸ,
ՈՐԻՆ ՊԵՂԵԼ ԵՄ ԻՄ
ՀՈՒՇԵՐԻ ԳՐՔԻՑ...

Ահա այսպիսին է իսկական ուսուցիչը, նա միշտ գեղեցիկ է ու հմայիչ, բարի է ու խելացի և միշտ ապրում է իր սաների հուշերում:

Իմ այս փոքրիկ ակնարկը մի յուրահատուկ ձոն է նվիրված իմ առաջին ուսուցչուհուն և իմ օրինակով ցանկացա ընդգծել այն բացառիկ սերը,որ կա յուրաքանչյուր սանի հուշերում ուղղված իր սիրելի ուսուցչուհուն:

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Լինելով երեխայի ուսումնական կյանքի անվտանգ անցկացման ու գիտելիքների մատչելի մատուցման երաշխավորը,պետք է.

*1)).*Լինի գիտելիքներ կրող հեղինակավոր անձ,բայց համեստ ու բարի անձնավորություն *:*

*2).*Հոգեպես առողջ ու խաղաղ խառնվածքով եվ դրական աուրայով *:*

*3).*Ուսուցիչը պետք է զինված լինի մանկավարժա-հոգեբանական գիտելիքներով և կարողանա երեխայի անձի նկատմամբ ցուցաբերել տարիքային ու անհատական
առանձնահատկությունների
բխող մանկավարժական մոտեցում*:*

*4).*երեխայի վարքագծային թերությունների ետևում պետք է տեսնել երեխայի հոգեբանական կերպարի առանձնահատկությունները ,նրա հոգեբանական պահանջմունքները*:*

*5).*Ուսուցչի հոգեբանական կերպարը պետք է օգնի նրան ներողամիտ լինել երեխայի վարքային կրթական բացթողումների նկատմամբ, բայց և

հնարավորինս անթերի դուրս գալու այդ իրավիճակից, օգնելով երեխային շտկվել ու ճիշտ դրսևորել իրեն:

6).Ուսուցչի հոգեբանական վիճակը և տրամադրությունը պետք է դրական,բարի ու աշխատանքային իրավիճակ ստեղծի դասարանում, անկախ ցանկացած պատճառներից:

7).Ուսուցիչը ստիպված է իր մանկավարժա-հոգեբանական գիտելիքներով աշխատանք տանելու և ծնողների և աշակերտների հետ , երեխայի ուսուցման ու դաստիարակության պրոցեսը անցնցում անցնելու համար:

8).Ուսուցիչը մատաղ սերնդի կրթա-դաստիարակչական գործը իրականացնող մանկավարժական մի «զորախմբի» անդամ է,որն իր երդվյալ
մասնագիտությամբ և նվիրյալ աշխատանքով
կերտում է երեխայի հոգին ու պաշտպանում է նրա
շահերը և պարտավոր է իր գործընկերների հետ բարի ու աշխատանքային
շփումներով իրականացնելու երեխայի
ուսումնական կյանքի
պաշտպանությունը:

ՈՒՍՈՒՑՉԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

Ուսուցիչը

1).իր գիտելիքների շնորհիվ պետք է դառնա երեխայի կյանքի շինարարն ու հոգու ճարտարապետը:

2).պետք է լավ տիրապետի առարկան ու պատրաստ լինի ցանկացած հարցի պատասխանը ձեվավորելու հենց երեխայի առաջ:

3).պետք է տեղյակ լինի մանկավարժական ու գիտական ժամանակակից պահանջներին ու նորություններին:

4).պետք է կարողանա իր գիտելիքները մատուցի գրագետ, մատչելի, համոզիչ,ճիշտ,համակարգ-
ված ու նպատակային:

5).պետք է կարողանա գիտելիքների մատուցման պրոցեսում կիրառել երեխայի անձի նկատմամբ անհատական մոտեցում:

*6).*պետք է կարողանա լսել երեխային,գնահատել նրա գիտելիքները ու բացատրել այն հարցերը,որոնք պատճառ են դարձել երեխայի գիտելիքների ոչ լիարժեք ներկայացմանը,
բացթողումներին ու դժվար ըմբռնմանը*:*
*7).*Պետք է սեր արթնացնի երեխայի մեջ տվյալ առարկայի նկատմամբ,
օգնելով նրան հասկանալու այդ առարկայի դերը կյանքում եվ իր ապագա մասնագիտության ընտրության հարցում*::*
*8).*Պետք է կարողանա կազմակերպել գեղեցիկ,արդյունավետ ու հետաքրքիր դաս,որի տերն է ու հեղինակը*:*
*9).*Պետք է դասի բոլոր փուլերում.դասի մատուցման, կշռադատման ու ամրապնդման ողջ ընթացքում ներգրավի դասարանի բոլոր աշակերտներին *:*
*10).*Պետք է դասն այնպես վարի ,որ երեխան կլանված լսի նրան ու հասկանա ամեն ինչ*:*
*11).*Պետք է կարողանա աշակերտներին ներգրավել դասին և թույլ տա երեխա՛ի ազատ մտքի ու հարցերի ձևավորման պրոցեսի կայացումը նոր նյութի վերաբերյալ, հաջող ընթանա ,անցնի ուսուցչի գնահատող ու լրացնող հայացքի ներքո*:*
*12).*Պետք է կարողանա դասը վարել անկաշկանդ ,բարեհոգ,խաղաղ,փոխա-դարձ հարգալից ուսուցողական միջավայրում*:*

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԵՐՊԱՐՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

--- --- --- --- --- --- --- --- --- ---

*1).*ՈՒՍՈՒՑՉԻ վեհ կերպարը
*2).*Մանկավարժական հմայքը
*3).*Կեցվածքը,հագ ու կապը
*4).*Խոսքի ելևէջները , արտահայտվածությունը,խոսքի ուժը,ձայնը, խոսքի հնչեղությունը,տոնը,գրագետ խոսքը, հակիրճ ու բովանդակալից խոսքը
*5).*Ժամանակակից հայացքները, ժամանակի հետ ու ժամանակից առաջ քայլելու կարողությունը*:*
*6)*Գիտելիքների մակարդակն ու գիտելիքների բազմազանությունը
*7).*հոգու ազնվությունն ու սրտի բարությունը
*8).*Երեխային սիրելու ու գնահատելու կարողությունը
*9).*Սովորելու ցանկությունն ու սովորեցնելու հմտությունը

*10)*Երեխայի կյանքը բարելավելու եվ ապագան ծրագրելու կարողությունը*:*
*11.*Ուսուցչի բարոյական նկարագիրն ու դավանած արժեհամակարգը
*12).*Ուսուցչի կրթական
մակարդակն ու
բարեվարքության աստիճանը
*13).*Ուսուցչի բարոյական ու անձնային օրինակելի
անհատական վարքագիծը
*14).*Կյանքի նկատմամբ
ձևավորած հայացքներն ու նպատակները
*15).*Ուսուցչի անձի,կերպարի ու գիտելիքների
ներդաշնակությունը
*16).*Ուսուցչի բնավորության ու խառնվածքի բարոյական ու արժանապատիվ
նկարագիրը
*17).*Ուսուցչի անկաշառ
հոգին ու մանկավարժական նվիրումը*:*
*18).*Ուսուցչի ազգային
արժեքների ու
հայրենասիրական զգացումների կրող լինելու
հատկանիշը*:*
*19).*Ուսուցչի մեծահոգի,ներողամիտ, բարիք արարող ու բարի
կամեցող կերպարը
*20.*Ուսուցչի պատվախնդրությունն ու
արժանապատիվ պահվածքը*:*

ՈՒՍՈՒՑՉԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԸ
--- --- --- --- --- --- --- --- --- --- ---

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳՈՒ ԲԺԻՇԿՆ Է,
ՆՐԱ ԿՅԱՆՔԻ
ԼՈՒՍԱՑՈՒՅՑԸ,
ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԷՆԵՐԳԻԱՆ Է,
ԳԻՏԵԼԻՔԻ ՎԱՍՏԱՀԵԼԻ ԱՂԲՅՈՒՐԸ
ԵՐԵԽԱՅԻ ԵՐԱՉԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Նրա հույզերի ու մտքերի առագաստն է:

Երեխայի հոգու բժիշկն է, նրա կյանքի լուսացույցը,Երեխայի ներշնչանքի էներգիան
է,,գիտելիքի վստահելի
աղբյուրը,Երեխայի Երազանքի խորհրդանիշն է, նրա հույզերի ու մտքերի առագաստն է ,Երեխայի
բարեկամն է ու նրա
խորհրդատուն, նրա ուժն ու
պաշտպանն է,Երեխայի հպարտության ու
հիացմունքի մարմնավորումն է,իր առաջին սիրո ու ապագա իդեալի կերպարն է,Երեխայի ուրախությունների ու
տխրությունների հեղինակը, Երեխայի դպրոցական
կյանքի բարի հեքիաթն է ու պահապան հրեշտակը և իր
ունեցած
ամենաանհասանելի աստղը,որ փայլում է իր համար ու դառնում նրա կյանքի լույսն ու հոգու ջահը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

------- ------- ------- -------

Համառոտ ակնարկ

-- -- -- -- -- -- -- -- -- -- -- --

Գործնական հետազոտություն անելու համար նախատեսել եմ թեստային եղանակով կամ զրույցի մեթոդով պարզել ուսուցիչների, աշակերտների, և ծնողների վերաբերմունքը ուսուցման պրոցեսի եվ ուսուցչի կերպարի մասին, ներկայացնել ուսուցման պրոցեսի ներկայացուցիչների ժամանակակից հայացքները ուսուցչի և ուսուցման պրոցեսի վերաբերյալ, բացահայտել ուսուցչի բացառիկ դերը նոր ժամանակների կրթական պրոցեսում և Նրանցից յուրաքանչյուրի անհատական կերպարի ազդեցությունը ուսուցման պրոցեսի վրա:

Ահա այս հետազոտական բազմակողմանի ուսումնասիրություններից հետո կպարզվի իմ վարկածի ճշտությունը , այն է.

ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԸ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԱԶԴՈՒՄ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՎՐԱ: Եվ իմ իրականացրած
հետազոտություններից կձևավորեմ թեմայիս հետազոտությունից բխող եզրակացությունը:

- ***1.*ՀԱՐՑԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

----- ----- ----- ----- -----

ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԻ
ՄԱՍԻՆ

----- ----- ----- ----- ----- ----- -----

1. **Ո՞Վ Է ՔԵԶ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ**

ա).հեղինակավոր մարդ
բ).խորհրդատու անձ
գ).գիտելիք տվող

***2.*ԻՆՉՊԻՍԻ՞Ն ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԻՍԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ*.**

ա).բարի
բ).խելացի
գ).հմայիչ

***3.*ՍԻՐՈՒ՞Մ ԵՔ ՁԵՐ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ*.**

ա).այո
բ).ոչ բոլոր
գ).չգիտեմ

***4.*Ի՞ՆՉՆ ԵՍ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐՈՒՄ*.**

ա).արտաքին տեսքը
բ).բարությունը
գ).բարեկրթությունը

***5.*ՈՒՆԵ՞Ս ԱՐԴՅՈՔ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ*.**

ա).այո

բ).ոչ

գ).չգիտեմ

6.ՆՇԻ՛Ր. ՔՈ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉԻ 3 ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ.

ա)...

բ)….

գ)....

7.Ի՞ՆՉ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵՋ.

ա).ոչ մի

բ).նրանք ժամանակակից

չեն

գ).նրանք խիստ են

8.ՈՒՍՈՒՑՉԻՆ ՊԵՏՔ Է.

ա).սիրել

բ).գնահատել

գ).հարգել

9. ԿՈՒԶԵՆԱՅԻ՞Ր ՆՄԱՆՎԵԼ ՔՈ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ.

ա).այո

բ).ոչ

գ).չգիտեմ

10).ԱՍԱ 3 ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՍԵԻՐ ՔՈ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ.

ա).....

բ).....

գ).....

11.ԿՈՒԶԵՆԱՅԻ՞Ր ԱՊԱԳԱՅՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ.

ա).Այո

բ)Ոչ

գ).Չգիտեմ

12.ՔՈ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ ԻՆՉՊԻՍԻ՞Ն ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԻՍԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ.

ա). անթերի ,

բ).խելացի,

գ).բարեկիթ :

***13.* Ի՞ՆՉԸ ՉԵՍ ՍԻՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵՋ** ա).կոպտությունը բ).խստությունը գ).անարդար վերաբերմունքը

***14.*ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԿՑԱՆԿԱՆԱՅԻՐ, ՈՐ ԼԻՆԵՐ ՔՈ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ.**

ա).շատ գրագետ

բ).շատ պահանջկոտ

գ).շատ բարի

***2*.*ՈՒՍՈՒՑՉԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՁԵՎԸ**

----- ----- ----- ----- ----- ----- -----

***1).*ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԵՏՔ Է.**

ա).խիստ լինի

բ).բարի լինի

Գ).հումորով լինի

***2).* ԵՐԲ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՈՒՍՈՒՑՉԻՆ, ՍԻՐՈՒՄ ԵՄ ՆԱԵՎ ՆՐԱ ԴԱՍԸ.**

*1)*այո

*2).*ոչ

*3).*հնարավոր է

***3).*ԵՍ ԼԱՎ ԵՄ ԸՆԿԱԼՈՒՄ ԱՅՆ ԴԱՍԸ.**

*1).*որին լսում եմ

*2).*որը պատմում է իմ սիրելի ուսուցիչը

*3).*որը լավ են բացատրում

4). ԻՆՁ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է.

ա).ուսուցչի ձայնը

բ).ուսուցչի հոգին

գ).ուսուցչի արտաքինը

5).ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ ՀԱԳՆՎՈՒՄ Է.

ա).սպորտային ոճով

բ).դասական ոճով

գ).էլեգանտ ոճով

6).ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԴԱՌՆԱԼ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ (ՈՒՍՈՒՑԻՉ).

ա).այո

բ).ոչ

գ).չգիտեմ

7).ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՅՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ,

ա).որը բարձր է գնահատում

բ). կիրթ է

գ).ինձ սիրում է

8). ՈՒՍՈՒՑՉԻ ՔՈ ԻԴԵԱԼԸ ԿԱ՞ ԻՐԱԿԱՆՈՒՄ.

ա) այո

բ). ոչ

գ).չգիտեմ

9).ԻՆՉ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՍ ՔՈ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՑ ա).նա իմ խորհրդատուն է , բ).նրանից շատ բան եմ սովորում գ).Ուզում եմ ինձ բարձր գնահատի

10).ԿԱՐՈՏՈ՞ՒՄ ԵՍ ՔՈ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

ա).այո

բ).ոչ

գ).հնարավոր է :

3*.ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ

--- --- --- ---- --- --- --- --- ---

1).ԵՐԲ ԵՍ ՃԱՂԻԿՆԵՐ ՆՎԻՐԵԼ ՔՈ ՍԻՐԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

ա)վերջերս

բ)շատ շուտ

գ).չեմ նվիրել

2).ԵԹԵ ԴՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ԼԻՆԵԻՐ,ԱՊԱ ԻՆՉԸ ՉԵԻՐ ԱՆԻ.

ա)կոպիտ չէի լինի

բ).երեխաների հետ բարի կլինեյի

գ).կանեյի այնպես, ինչպես իմ սիրելի ուսուցչուհին

3.ԻՆՉ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՐ ՔՈ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ.

ա).որ նա առողջ լինի

բ).որ նա դասավանդի նաև իմ երեխաներին,

գ).որ ինձ չմոռանա:

4.ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ.

ա).բարեկեցիկ

բ).շատ լավ

գ).այնպես , ինչպես բոլորը:

5.ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ.

ա).սիրելի է

բ).հարգանքի է արժանի

գ).հարազատ է

6.ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՐ ԱՅՑԵԼԵԼ ՔՈ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ.

ա).այո

բ)ոչ

գ).Եթե հարկ լինի

7.ՈՎ Է ՔԵԶ ՀԱՄԱՐ ՊԱՏՎԱՐԺԱՆ ՄԱՐԴ.

ա).պատգամավորը

բ).նախարարը

գ).ուսուցիչը

* * * *

***4.ՀԱՐՑԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ**

----- ----- ----- ----- ----- -----

1).Աշխատանքը ձեզ համար.

ա).սիրելի է

բ).դժվար է

գ).ծանր է

2).Ուսուցչի աշխատանքը գնահատված է.

ա).այո

բ).ոչ

գ).սպասում ենք գնահատանքի

3).Եթե կրկին ընտրեյիք մասնագիտություն, դարձյալ կընտրեյիք ուսուցչի մասնագիտությունը

ա).այո

բ).ոչ

գ).հնարավոր է

4).Ինչը Ձեզ չի գոհացնում ուսուցչի աշխատանքում.

ա).աշխատավարձը

բ) պահանջները

գ).չգնահատված լինելը

5.Ինչը կփոխեյիք դպրոցում

ա).աշակերտների
թիվը
բ).Դասաժամերի
քանակը
գ).ամեն ինչ

6).Սիրում եք ձեր աշխատանքը.

ա)այո
բ)ոչ
գ).չգիտեմ

7).Գնահատված է ուսուցիչը հասարակության մեջ.

ա).այո
բ).ոչ
Գ) չգիտեմ

8).Լավ է ապրում ուսուցիչը.

ա)այո
բ).ոչ
գ).հազիվ է հասցնում

9).Որքան կուզենայք, որ լիներ ուսուցչի աշխատավարձը.

ա)200000 դրամ
բ)300000
գ).400000դ.

10).Ինչն է դժվար ուսուցչի աշխատանքում.

ա).աշակերտների հետ
աշխատանքը
գ)ուսուցման պրոցեսը

***5.ՀԱՐՑԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

----- ----- ----- ----- ----- ----- -----

1.Վստահում եք ձեր երեխաների կրթությունը ուսուցիչներին.

ա)այո
բ).ոչ ամբողջությամբ
գ).շատ եմ վստահում

2.Սիրում եք ձեր երեխաների ուսուցիչներին.

ա).այո

բ).հարգում Եմ

գ).գնահատում Եմ

նրանց աշխատանքը

3.Ձեր Երեխան հարգում է իր ուսուցիչներին.

ա).այո

բ).ամպայման

գ).չգիտեմ

4.Հաճախակի Եք

ծաղիկներ նվիրում ձեր Երեխաների ուսուցիչներին.

ա).այո

բ)ոչ

գ).Երբեմն

5.Գնահատում Եք ուսուցչի աշխատանքը.

ա).այո

բ).շատ Եմ գնահատում

գ).անգնահատելի է

- ՈՒՍՈՒՑԻՉ -
- նա շատ
- կարեվոր գործ է կատարում դպրոցում

* * * * *

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԴՊՐՈՑԻ ՀԱՅԵԼԻՆ Է.

* * * * *

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

--- * --- * --- * --- * ---* ---

Ուսուցչի մասնագիտությունը բացառիկ է և իր աշխատանքի բնույթով և իր նշանակալի դերով, նրա

աշխատանքի գլխավոր
նպատակը համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ-անհատի ձևավորումն է, որն իր մեջ կկրի ազգային ու համամարդկային
արժեքներ, կկարողանա
ազատորեն ինտեգրվել
հասարակության մեջ,
կկառուցի իր սեփական
կյանքը իր նպատակներին
համապատասխան ,կունենա առողջ
բարոյա-հոգեբանական կերպար, գիտելիքների
հարուստ պաշար և իր
ապրած կյանքով
կիրականացնի ոչ միայն իր
երազանքներն ու
ցանկությունները , այլև
բարիք կստեղծի իր երկրի,
իր ժողովրդի, իր
հարազատների ու իր
հայրենիքի համար, կապրի
ազնիվ ու բարոյական
, սկզբունքներով, կսիրի
մարդկանց ու հայրենիքին:
Ահա այս վեհ
գաղափարներին է
ծառայում ուսուցիչը եւ
նրանով է ձևավորվում
հասարակության այն մասը, որը դուրս է եկել նրա
տեսադաշտից, մտքերից ու
դպրոցական կյանքից: Եվ
հենց այս կերպարն է
ներշնչել
մարդկանց ամեն լավ ու
բարի մարդուն ուսուցիչ կոչել և ամեն մի արատավոր կամ արժեքավոր երևույթի

Ետևում ուսուցչին տեսնել: Այս մասնագիտության
նկատմամբ իմ
վերաբերմունքը բացառիկ է հատկապես, որովհետև ես չէի պլանավորել իմ
ապագան այսպիսին, բայց
 նախախնամությունն է գուցէ
 իր գործը արել այնպես, որ ես ստանամ 3 բարձրագույն մանկավարժական
մագիստրոսական կրթություն ու
աշխատանքային շուրջ
30-ամյա կենսագրությամբ
իրականացնեմ նման
 հետազոտություն նման
 թեմայով ու այս պահերի
համար շնորհակալ եմ այն
նորաշնորհ միջավայրին ու այն երիտասարդ
 ղեկավարներին, որ
 ներշնչեցին ինձ գրելու այս
 հետազոտական
աշխատանքը, որը մի
յուրահատուկ գիտական
 ստեղծագործություն
կդառնա .”Վաստակաշատ
ուսուցիչը ապագա ուսուցչի
մասին” խորագրով: Ահա
այսպիսի նախնական
 խոսքով եմ սկսում իմ
եզրակացությունը և
 հավաստում որ իմ և
տեսական և գործնական
հետազոտությունը լրջորեն հիմնավորել են իմ վարկածի ճշմարտացիությունը,
որի
 համար կներկայացնեմ
որոշակի վերլուծություններ
 բերված իմ
հետազոտություններից:

Այդ վերլուծությունները
քաղել եմ միայն
զրույցներից, որովհետև
թեստերի օգտագործման
հնարավորություն չեմ
ունեցել և կարծում եմ, որ
զրույցի մեթոդն էլ ինձ թույլ է
տվել ընդհանիւր
վերլուծություններով
ձևավորել իմ
եզրակացությունը.

**Մենք թևակոխում ենք 22-րդ դարը, գիտության ու տեխնիկայի զարգացման նոր համակարգ,սակայն
որքան էլ գիտությունը և տեխնիկան զարգացել են, ուսուցչի դերը չի նսեմացել մատաղ սերնդի
դաստիարակության հարցում, ուսուցչի անձով, ուսուցչի անձնային ու մասնագիտական կերպարով է
պայմանավորված ուսուցման պրոցեսի
հաջողությունը, նրան
ընդունում են իր հագ ու
կապով, կեցվածքով, հոգու ջերմությամբ, բնավորության բարությամբ և գնահատում
են նրա գիտելիքները,
մարդկային կերպարը և
մանկավարժական կարողությունները:
Ուսուցչի աշխատանքը դժվարացել է կապված կապված նոր սերնդի ազատամիտ կերպարից,
ծնողների զբաղվածությունից,ուսման նկատմամբ որոշակի անտարբերությունից և
ուսուցչի վրա դրված
պարտականություններից:Ուսուցչի աշխատանքը եղել ևմնում է
ամենահարգված
մասնագիտությունը, սակայն նրա աշխատավարձը շատ ցածր է, ուսուցիչը լավ պայմաններում չի ապրում,երբեմն նույնիսկ**

համակարգիչ չունի ու պատշաճ հեռախոս, ներկայանալի ու գեղեցիկ հագուստ,սակայն դրանից չի պակասում նրանց սերը երեխաների նկատմամբ ու մանկավարժի մասնագիտության նկատմամբ, իսկ իր սոցիալական խնդիրների և մանկավարժական խնդիրների լուծման համար սպասում է փոփոխությունների եւ հավատում որ մանկավարժի աշխատանքը գնահատվում է և հասարակության կողմից և պետության կողմից ու հույս ունեն, որ դպրից կմտնեն միայն
մանկավարժական
կրթությամբ
մասնագետներ եւ նրանց
գիտելիքներին չեն
կասկածի ու կարիք չի լինի գիտելիքները ստուգել և
մրցույթային համարել
նրանց մանկավարժական
կերպարը:
Այսպիսով ուսուցիչն իր
աշխատանքով ստեղծում է մի հասարակական շերտ,
որն էլ պետք է հոգ տանի
ուսուցչի հեղինակության
ու նրա սոցիալական
կյանքի բարձր մակարդակ ապահովելու համար :
Հասարակական կյանքի բոլոր արատավոր ու
արժեքավոր երևույթների
սերմերը դրվել են
դպրոցում, ուրեմն պետք է գնահատել այս սուրբ
մասնագիտության
կրողներին,
ուսուցիչներին, որոնք
իրենց դժվարին
աշխատանքով գունավորում են մեր
աշխարհը, իրենց հոգու
ջերմությամբ բարություն
ու անկաշառ սեր

տարածում աշխարհում, ու սրտի խաղաղ ռիթմով և մտքի պայծառ լույսերով գեղեցկացնում են մեր կյանքը, մշտապես մնալով մեր հուշերում, որպես
կյանքի ջահեր, որոնք
մշտապես լույս են սփռում ամենուր:
ՈՒՍՈՒՑԻՉ-այս անունը
սուրբ մի տաճար է մեր հոգիներում, իսկ ուսուցչի աշխատանքը մեր կյանքի մշտավառ ջահն է, որ լույս է տալիս մեր կյանքին-Ահա սա է իմ հետազոտության եզրահանգման գլխավոր միտքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- - - - - - - - - - - - - -

1. Յու. Արզումանյան,Ա.Ս.Սահակյան "ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ", *(*Երեվան-*2005* թ.*)*

2. Լիդա Թորգոմյան " ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ *(* Երեվան-*2005* թ.*)*

3. Յու. Կ. Բաբանսկու խմբագրությամբ "ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ" *(* Երեվան-*1986* թ., մաս *1)*

4). Յու. Կ.Բաբանսկու խմբագրությամբ " ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ",*(*Երեվան-*1987*թ., մաս *2)*

*5).*Տ.Ս.Բաբուշկինա, " ԴՊՐՈՑԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂՈՒ ՍԿԻԶԲԸ", *(*Երեվան-*1986* թ.*)*

6). Վ.Ա.Կրոտեցկի, "ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ", *(*Երեվան-*1976* թ.*)*

7). Ս. Վարդումյան,Ա. Հովհաննիսյան, Գարի Վարելլա, "ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ "